

ՅՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ

ԵՒ

ՌԻՍԼԵՐ ԱՒԱԳ

IV

Սավիճիում:

Մեծ դժբախտութիւն էր այն բանը, որ այդ երկու ընտառնիքները մի ամիս միասին մնացին Սավիճիում:

Երկու տարի անցնելուց յետոյ ժօրժն ու Սիդօնին նորից հանդիպեցին միմեանց այդ հինաւուց, հետևաբար միշտ միեւնոյնը մնացող կալուածքում, ուր խճաքարերը, լճակները և ծառները, անշարժ ու յարատե, կարծէք ծաղր լինէին այն ամենի վերաբերմամբ, ինչ անցողական է ու փոփոխական: Շատ աւելի հաստատուն ու աղնիւ բնաւորութիւններ էին պէտք, որպէս զի չարաբաստիկ չը լինէր այդ հանդիպումը:

Ինչ վերաբերում է կլէրին, երբէք նա այդքան երջանիկ չէր զգացել իրան, երբէք Սավիճին այդքան գեղեցիկ չէր թըւացել նրան: Ի՞նչ հրճուանք էր զրօսեցնել երեխային այն սիզամարգերում, ուր ինքն էլ քայլել էր փոքրիկ ժամանակը, իբր ջանէլ մայր նստել ծառերի ստուերում այն նոյն նստարանների վրայ, ուր երբեմն նստած դիտում էր իր երեխայական խաղերը իր մայրը, կամ ժօրժի հետ թևանցուկ զնալ տեմնելու այն բոլոր ամենամանը խորշերը, ուր իրանք մի ժամանակ խաղ էին արել միասին: Նա զգում էր մի տեսակ անդորր բաւարարութիւն, զգում էր այն լիուլի երջանկութիւնը, որ մեղմ բնաւորութիւնները վայելում են լուսութեան մէջ, և ամբողջ օրը զրօսնում էր ծառուղիներում տաճու լայն հագուստով և գանդաղ քայլուածքով, ոտը երեխայի ոտի հետ փոխելով և շարունակ կանգ առնելով նրա ճիշերի ու պահանջների չնորհիւ:

Շատ քիչ էր պատահում, որ Սիդօնին էլ մասնակցէր այդ

մայրական զբօսանքներին: Նա ասում էր, թէ երեխաների աղմուկը իրան յոդնեցնում է և այդ բանում համերաշխ էր ծեր Գարդինուայի հետ, որ ամեն պատրուակից օգտում էր իր թռուին անախորժութիւն պատճառելու համար: Իր նպատակին լաւ հասած լինելու համար ծերուկը զբազւում էր միմիայն Սիդոնիով և աւելի ևս սիրալիր ուշազրութեամբ էր վերաբերուում նրան, քան վերջին անգամ: Բոլոր կառքերը, որ երկու տարուց ի վեր փակած էին պահում դրախ սրահում և ամեն շաբաթ սըրբուում էին, որովհետև սարգերը ոստան էին հիւսում նրանց մետաքսէ բարձերի վրայ, — նա դրեց Սիդօնիի տրամադրութեամ տակ: Օրը երեք անգամ կառքերը լծում էին և վանդակապատ դարպասը շարունակ բաց ու խուփ էր լինում: Ամբողջ տունը իր սարք ու կարգով, իր նիստ ու կացով համակերպուեց այդ աշխարհիկ ընթացքին: Պարտիզանը սկսեց աւելի լաւ խնամք տանել ծաղիկներին, որովհետև տիկին Ռիսլէրը ամենազեղեցիկներն էր ընտրում ճաշի ժամանակ իր մազերի մէջ խրելու համար և բացի այդ հիւրեր էին գալիս այժմ: Նախընթրիքները ու զրօսանքներ էին կազմակերպում, ուր տանտիկնութիւնը ֆրօմօն կրտսերն էր անում, բայց ուր Սիդօնին իր վառվառն բնաւորութեամբ փայլում էր անմրցակից: Բացի այդ, կէրը յաճախ ասպարէցը ամբողջ նրան էր թողնում: Երեխան ունէր քնի ու զբօսանքի ժամեր, որ կէրը երբէք չէր նուիրում իր անձնական զուարձութիւններին: Այդ միջոցներին նա անհրաժեշտարար գնում էր երեխայի մօտ և նոյն իսկ երեկոները նա շատ անգամ չէր կարողանում Սիդօնիի հետ գնալ Պարիզից վերադարձող Փօրժին ու Ռիսլէրին ընդպատճ:

— Կը ներես ինձ, ասում էր նա Սիդօնիին, բարձրանալով իր սենեակը:

Տիկին Ռիսլէրի ցնծութեանը չափ չը կար: Գողարիկ ու անգործ՝ նա սլանում էր ընդպատճ, առանց նշմարելու կառքը արագ ընթացքը և առանց մոտածելու որ և է բանի մասին:

Նրան թմրութիւնից համում էր միայն զով քամին, փչելով նրա երեսին քողքի տակից: Անորոշ կերպով, կիսախուփ աչքերով նա նշմարում էր այն ժամանակ մի պանդոկ ճանապարհ պատուանքում կամ թէ անուահետքերի կողքի խոտի վրայով ոտող գնացող վատ հազնուած երեխաներ: Այդ յիշեցնում էր նրան այն զբօսանքները, որ ինքը մի ժամանակ Ռիսլէրի և իր ծնողների հետ կատարում էր կիրակի օրերը, և այդ յիշելիս նա մի թեթև դող էր զգում, որ ստիպում էր նրան շիտկուել իր փափուկ ու նոր հագուստի մէջ և աւելի հաստատ նստել օրօ-

բուռղ կառքի մէջ, ուր նրա միազը նորից թմրում էր՝ երջանիկ ու ապահով:

Կայարանում ուրիշ կառքեր էլ էին լինում: Շատ էին ուշադրութիւն դարձնում նրա վրայ: Երկու երեք անգամ նա լսել էր, թէ ինչպէս փսխում էին նրա կողքին՝ «Տիկին Ֆրօնն կրտսերն է...», և յիրաւի մարդ շատ հեշտութեամբ կարող էր սխալուել, տեսնելով նրանց կայարանից վերադառնալիս, երբ Սիդոնին ու Ժօրժը կողք կողքի բազմած կառքի խորքումը խօսում ու ծիծաղում էին իրար հետ, իսկ Ռիսլէրը նրանց դիմացը նստարանի վրայ ժպտում էր մեղմօրէն, լայն ձեռքերը տափակ դրած ծնկների վրայ և մի քիչ քաշուելով այն բանից, որ ինքը այդպիսի գեղեցիկ կառք է նստել: Այն բանը, որ իրան տիկին Ֆրօննի տեղն են դնում, սաստիկ հապարտացնում էր Սիդոնիին, և նա օրէցօր աւելի ու աւելի էր ընտելանում այդ մտքին: Տուն գալուց յետոյ Ֆրօնններն ու Ռիսլէրները զատում էին մինչեւ ճաշի ժամանակը, բայց Ժօրժ Ֆրօննը շատ երիտասարդ էր, որպէս զի կարողանար համակուել իր ընտանեկան երջանկութեամբ, և նայելով իր կնոջը, որ հանգիստ նստած էր լինում քնած երեխայի կողքին, նա շարունակ մտածում էր փայլուն Սիդոնիի մասին, որի ձայնը ցնծալից գեղգեղանքներով թնդում էր պարտէղի նշդարբների տակ:

Մինչդեռ իր գղեակը կերպարանափոխուում էր մի ջահէլ կնոջ քմահաճուքով, ծեր Գարդինուան շարունակում էր ապրել տաղտկացող, անգործ ու զառամեալ հարուստի սահմանափակ կեանքով: Ամենալաւ բանը, որ նա գտել էր իր ձանձրոյթը փարատելու համար, լրտեսութիւնն էր Ծառաների դուրս ու տուն անելը, այն բաները, ինչ որ խօսում էին իր մասին խոհանոցում, կանաչեղինով ու պտուղներով լի կողովը, որ ամեն առաւտ բերում էին բանջարանոցից մառանը, առիթ էին տալիս անընդհատ հետախուզութիւնների: Նրա համար չը կար աւելի մեծ զուարճութիւն, քան մէկին բռնել յանցանքի մէջ: Այդ զբաղեցնում էր նրան, բարձրացնուում էր նրա նշանակութիւնը և հացի ժամանակ նա երկար ու բարակ պատմում էր լուռ հիւրերին կատարուած յանցանքը, այն խորամանկ հնարքները, որ ինքը գործ էր դրել յանցաւորին բռնելու համար, յանցաւորի կերպարանքը, արսափը, աղաչանքները:

Այդ մշտական հսկողութեան համար ծերուկը մի քարէ նստարան էր ընտրել, որ պնդացրած էր աւազի մէջ մի ահագին պաւլօնիայի յետեւում: Ամբողջ օրերով նա նստում էր այստեղ առանց կարդալու, առանց նոյն իսկ մտածելու, աչքերը սրած նայելով, թէ ով է դուրս ու տուն անում: Գիշերուայ հա-

մար նա ուրիշ բան էր հնարել: Մաղկազարդ սանդուխների գլխին գտնուող գաւիթի յատակում նա մի ծակ էր շինել տռեկ ուղիղ իր սենեակի տակին, որ գտնուում էր մի յարկ վերև: Այդ տեղով մի կատարելագործուած լսողական խողովակ հասցնում էր նրա ականջին ներքի յարկի բոլոր շատերը և նոյն իսկ երեկոյեան պատշաճում մաքուր օդ ծծող սպասաւորների խօսակցութիւնները:

Դժբախտաբար, գործիքը, շատ նուրբ լինելով, չափաղանց եցնում էր, երկարացնում ու իրար խանուում բոլոր հնչիւնները, և երբ պ. Գարդինուան ականջը դնում էր խողովակին, կարողանում էր լսել միմիայն պատի ժամացոյցի մշտական ու կանոնաւոր տրկարկոցը, ներքենում վանդակի մէջ թառած թութակի ճիշը, կամ մի կորցրած հատիկ փնտոող հաւի կչկչոցը: Իսկ մարդկային ձայները համուում էին նրա ականջին միայն իբր մի անորոշ բորբոք կամ ամբոխի մուռնչ, որի մէջ անկարելի էր որոշել որ և է խօսք: Այդ էր եղել նրա ամբողջ օգուար այդ հրաշալի գործիքից, որ նա թագյնում էր իր անկողնի առաջասարի ծալքի մէջ:

Մի գիշեր ծերուելը նոր էր աչքերը փակել, որ յանկարծ վեր թռու տեղիցը ինչ որ գոան ճռոցից: Այդպէս ուշ՝ այդ բաւական արտասովոր բան էր: Ամբողջ տունը քնած էր: Լսում էր միայն, թէ ինչպէս պահապան չները քայլում էին աւագի վրայ կամ կանգ էին առնում մի ծառի տակ, որի կատարին բուի բուոց էր հնչում: Շատ լաւ առիթ էր լսողական գործիքից օգտուելու համար: Խողովակը մօտեցնելով ականջին, պ. Գարդինուան համոզուեց, որ չէր սխալուել: Ազմուելը շարունակւում էր: Մի գուռ բաց արեցին, յետոյ մի ուրիշը: Պատշգամբի նիզը յետ քաշեցին՝ ճիգ գործ դնելով: Բայց ոչ Պիրամը, ոչ Թիսբէն, ոչ նոյն իսկ ահռելի նիւֆառնդէնդեան շունը, կիսուը, իրար չեկան: Ծերուելը կամաց տեղիցը վեր կացաւ տեսնելու համար, թէ ովքեր են այդ տարօրինակ գողերը, որոնք ներս մտնելու փոխարէն դուրս էին գալիս, և ահա թէ ինչ նկատեց նա իր պատուհանի վանդակափեղի արանքից:

Բարակ ու բարձրահասակ մի պարոն, ժօրժի շէնք ու չնորհքով, թեանցուլի գնում էր ժանեակէ զլխանցով մի կնոջ հետ: Նրանք առաջ դադար առան պ. Գարդինուայի լրտեսական նստարանի վրայ, ծաղկափթիթ պալօնիայի տակին:

Հրաշալի, ձիւնափայլ գիշեր էր: Մասերի կատարները չօշափելով լուսինը շողշողուն փաթիւներ էր կազմում խիտ տերեների մէջ: Լսումի ճառագայթների տակ սպիտակին տուող դարատափերը, ուր գանգրամորթ նիւֆառնդէնդեան չները գնում

գալիս էին՝ դարանելով գիշերային թիթեռներ, և լայնածաւալ լճակների խոր ու միապաղաղ ջրերը՝ շողում էին անձայն ու անդորր ցոլքով, կարծես արտափայլելով մի մեծ արծաթէ հայելիի մէջ: Սիզամարգերի ափերին տեղ-տեղ փայլփում էին լուսատըտ-նելիներ:

Զքօննող զոյգը մի փոքր ժամանակ լուռ նստած մնաց պաւոնիայի ստուերի տակ, խորասուզուած այն թանձր խաւարի մէջ, որ լուսնկայ գիշերները տիրում է շուաք տեղերում: Յետոյ, յանկարծ նրանք երեսային լուսնի շողքերի մէջ և, հեշտապիրաբար իրար փարուած, դանդաղ անցկացան գաւիթը ու անհետացան նշգարիների ծառուղիում:

—Ես հաւատացած էի, ինքն իրան ասաց ծեր Գարգինուան, ճանաչելով նրանց:

Ասենք, ինչ հարկ կար նրանց ճանաչելու: Միթէ չների հանդստութիւնը և քուն մտած տան տեսքը բաւական չէին, որպէս զի նա ամենահաստատ կերպով իմանար, թէ ինչ անամօթ, անպատիժ և զաղտագողի յանցանք էր կատարուում գիշերները իր զղեակի ծառուղիներում: Բայց և այնպէս ծեր գեղջուկը հիացած էր իր արած զիւտից: Առանց ճրադը կպցնելու նա, ինքն իրան ժպտարով վերադարձաւ իր անկողինը և որսորդական զէնքերով լի փոքրիկ առանձնասենեակում, —որտեղից նա դարանամուտ զիտում էր, սկզբում զողի տեղ ընդունելով նրանց, —լուսնի շողքը այլ ևս ոչինչ չէր լուսաւորում բացի պատից կախկախուած հրացաների շարքից և ամեն չափի փամփուշտների արկդիկներից:

Ժօրմն ու Սիզօնին վերակել էին իրանց սիրային յարաբերութիւնները նոյն ծառուղիի ծայրում: Մի ամբողջ տարի, որ անցել էր տատանումների, անվճուական մաքառման և դիմադրութիւնների մէջ, կարծես ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի նախապատրաստութիւն վերահանդիպման համար: Եւ ի հարկէ, աւելորդ է ասել, որ յանցանքը մի անգամ կատարելուց յետոյ, նրանք միշտայն դարձանք էին զգում, թէ ինչու էին այսքան ուշ սկսել... Մանաւանդ ժօրժ Ֆրօնմնը, որ համակռւել էր մի մոլեգին կըրքով: Նա խարում էր իր կնոջը, իր լաւագոյն մտերմին, նա խարում էր Ռիսլէրին, իր առևտրակցին, իր կեանքի բոլոր բողէների հաւատարիմ ընկերոջը:

Այդ մի լիառատ, մի յարատե կրկնուող խղճահարութիւն էր, որից նրա սէրը ընդհակառակը աւելի սաստկանում էր չնորհիւ կատարած յանցանքի անհունութեան: Սիզօնին նրա մտածութեան մշտական առարկան դարձաւ և նա սկսեց նկատել, որ ինքը մինչև այդ ժամանակ ամենաին չէր ապրել: Ինչ վերաբերում է

Սիդօնիին, Նրա սէրը բազկացած էր մնափառութիւնից և ոխակալութիւնից: Նրան ամենից շատ հաճոյք պատճառողը Կլէրի ստորացումն էր Ա՛խ, եթէ կարողանար նրան ասել՝ «Բո ամուսինը ինձ սիրում է... նա դաւաճանում է քեզ ինձ հետ...», այն ժամանակ սրտի բերկրութիւնը աւելի ևս մեծ կը լինէր: Իսկ Ռիսլէրը, Սիդօնիի կարծիքով, բոլորովին արժանի էր դաւաճանուած լինելու: Արհեստանոցի աշակերտունու ոճով, որով Սիդօնին մտածում էր դեռ, եթէ չէր էլ խօսում, Ռիսլէրը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի «ծերուկ», որին նա կին էր դարձել հարստանալու նպատակով: Իսկ «ծերուկները» հէնց նրա համար են ստեղծուած, որ ամուսինները խարեն նրանց:

Ցերեկը Սավինին պատկանում էր Կլէրին և երեխային, որ մեծանում էր, վազվզում էր աւազի վրայ, ծիծաղում էր, նայելով թուզուններին և ամպերին: Մայր ու զաւակ իրանց տրամադրութեան տակ ունէին ցերեկուայ լոյսը, արևով լի ծառուղիները: Բայց պարզ գիշերները պատկանում էին չնութեան, այդ հաստատ հիմնաւորուած յանցանքին, որ ցած ձայնով խօսում էր և անազմուկ քայլում փակ վանդակափեղկերի տակ և որի առաջ նիրհող տունը կուրանում ու համրանում էր և նորից ընկղմում իր քարային անզգայութեան մէջ, կարծես թէ ամօթ էր զգում այդ բոլորը տեսնելուց ու լսելուց:

V

Սիզիգմունդ Պլանուսը դոդում է դրամարկի համար:

—Կառք, իմ բարեկամ Շօրշ... Ի՞նձ համար կառք: Ի՞նչիս է պէտք:

—Հաւատացնում եմ ձեզ, սիրելի Ռիսլէր, որ այդ անհրաժեշտ է ձեզ: Օրէցօր մեր յարաբերութիւնները, մեր գործերը ընդարձակւում են. մի կառքը մեզ բաւական չէ այլ ես: Վերջապէս, փայելուչ չէ, որ ընկերակիցներիցս մէկին միշտ կառքով տեսնեն, իսկ միւսին ոտով: Հաւատացէք ինձ, անհրաժեշտ ծախս է այդ, որ, աւելորդ է ասել, կը մտնի առևտրական տան ընդհանուր ծախսերի մէջ: Դէ, դէ, զիջեցէք անհրաժեշտութեանը:

Կատարեալ զիջումն էր այդ:

Ռիսլէրին թւում էր, թէ ինքը գողութիւն է անում փող ծախսելով այնպիսի անասելի շոայլութեան համար, ինչպէս էր

սեփական կառք ունենալը, սակայն վերջ ի վերջոյ նա տեղի տուեց ժօրժի պնդումներին, մտածելով ինքն իր մէջ.

—Այ թէ կ'ուրախանայ Սիդօնին:

Ի՞նչ կարող էր կարծել խեղճ մարդը, թէ արդէն մի ամիս առաջ Սիդօնին ինքն էր ընտրել Բինդէրի մօտ այն կառքը, որ ժօրժ Ֆրօմօնը ուզում էր ընծայել նրան և որ իբր թէ ընդհանուր ծախսերի մէջ էին գցելու, որպէս զի չը խրանեցնէին Ռիսէրին:

Կարծես իր ամբողջ կեանքում այդպէս խարուած լինելու համար էր ստեղծուած այդ բարեհոգի Ռիսէրը: Բաւական չէին նրա բնածին ազնւութիւնը և նրա յատակ բնաւորութեան հիմքը կազմող դիւրահաւատութիւնը, որով նա վերաբերում էր բոլոր մարդկանց և ամեն բանի, վերջներքն էլ մի ուրիշ պատճառ էր աւելացել, որի չնորհիւ նրան հեշտ էր խարել—այդ այն հոգսերն էին, որ պատճառում էին նրան նրա ջանքերը Ռիսէրին տապարիչ մեենան գտնելու համար, որ յեղափոխութիւն էր մտցնելու որմաթզթերի արդիւնագործութեան մէջ և, նրա կարծիքով, իր բաժին վճարն էր լինելու առևարական տան հիմնադրամի մէջ: Երբ նա թողնում էր իր նախածրագիրները և դուրս գալիս առաջին յարկում գտնուող արհեստանոցից, շարունակ մտամիտի կերպարանք էր ունենում, ինչպէս առհասարակ այն մարդիկ, որոնց կեանքը և զբաղմունքները զատ-զատ ձանապարհներով են ընթանում: Աւստի կարելի է երեակայել, թէ ինչ երջանկութիւն էր նրա համար, որ այժմ արհեստանոցից վերադառնալիս տունը հանդարա էր գտնում, կնոջը՝ լաւ տրամադրութեան մէջ և միշտ զւուգուած ու ժամանուել: Առանց ինքն իրան բացատրելու այդ փոփոխութեան պատճառը, նա նկատում էր, որ «փոքրիկը» մի ժամանակից ի վեր էլ առաջուանը չէր իր վերաբերմամբ Այժմ Սիդօնին թոյլ էր տալիս նրան հետեւ իր հին սովորութիւններին, շիբուխ ծխել հացի վրայ քաղցրեղէն ուտելիս, մի քիչ քնել ձաշերից յետոյ և անսակցել պՇէրի ու Դըլօրէլի հետ գարեջրատանը: Տան սարքն ու կարգն էլ կերպարանափոխութեան էր ենթարկուել, սիրունացել էր: Օրէցօր շռայլութիւնը տեղի էր տալիս կօնֆօրտին: Ծաղկաշատ ծաղկարանների ու ալ կարմիր հիւրասևնեակի հեշտ ու թեթև կահաւորութիւններից Սիդօնին այժմ անցել էր մօդայի նրբութիւններին և սկսել էր արդէն զրաւուել հինաւուրց կահակարամիքով և հաղուազիւտ փայտ սեղէնով: Նրա սենեակի պաստանները մեղմ կապտագոյն մետաքսից էին և երիգուած էին ինչպէս մի գոհարեղէնի արկղիկ ներսից: Հին դաշնամուրի աեղ գրած էր մի հոչակաւոր վարպետի շինած դաշնամուր և ար-

գին ոչ թէ շաբաթը երկու անդամ, այլ ամեն օր էր դալիս նրա երգեցողութեան վարժուհին, տիկին Դօքսօնը, ձեռքին բերելով գլանածն փաթաթած մի որ և է ումանս:

Շատ տարօրինակ տիպ էր այդ ամերիկական ծագում ու նեցող կինը, որի՝ լիմոնի միջուկի նման չէկ մազերը շաղ էին անցած խիզախ ճակատի և պողպատագոյն աշքերի վերում: Արովինեան ամուսինը չէր թողնում, որ թատրոն մտնի, նա էլ երգեցողութեան դասեր էր տալիս և երգում էր մի քանի բուրժուական դահլիճներում: Միշտ ապրելով դաշնամուրի և երգեցողութեան համար յօրինուած մելօդիաների շինծու մթնոլորտում, նա իր համար սովորական էր դարձել մի տեսակ սանտիմենտալ զայրացածութիւն:

Նա ինքը մարմնացած ումանս էր: Նրա բերնում «սէր և կիրք» խօսքերը կարծես քանչորս վանկից բաղկացած լինէին, այնքան արտայտիչ եղանակով էր նա արտասանում այդ բառերը: Օ՛, արտայայտիչ եղանակ: Հէնց այդ էր, որ տիկին Դօքսօնը ամեն բանից վեր էր դասում և որ ապարդիւն կերպով աշխատում էր հաղորդել իր աշակերտուհուն:

Այն ժամանակ ամենքը գրաւելում էին «Այ Chiquita» ուժանսով, որ ամբողջ Պարիզը կլկացնում էր մի քանի սէզօն շարունակ: Սիրոնին ամենայն աշխատասիրութեամբ ուսումնասիրում էր այդ ումանսը և ամբողջ առաւտները լւառում էր, ինչպէս նա երգում էր..

On dit que tu te maries,

Tu sais que j'en puis mourir...

(Ասում են, ուզում ես պակուել,

Գիտես, որ կարող եմ դարդից մեռնել...)

—Mourriiir! (մեռնեեեեել), ընդհատում էր արտայայտիկ տիկին Դօքսօնը, սիրահալ դիրքով հակուելով դաշնամուրի վրայ, և ճիշտ որ պայծառ աշքերը այնպէս էր բարձրացնում դէսի առաստաղը և վլուխը այնպէս յուսահատօրէն դէսի յետ նետում, որ կարծես թէ իսկապէս մեռնում էր: Սիրոնին, ինչ անում էր, չէր կարողանում յաջողացնել այդ բանը: Նրա սատանայ աշքերը և կենսալից շրթունքները այդպիսի էօթան տաւիղի^{*}) սանտիմէնտալութիւնների համար չին ստեղծուած: Նրան աւելի յարմար կը դային Օֆֆէնբախի կամ էռվէյի օպէրէտների եղա-

*) Տափղ (սանթուր), որի լարերը ալնպէս են լարուած, որ ներդաշնակ հնչիմներ են հանում, երբ կախուած տեղը քարմին զարկումէ նրանց: Էօլ—հին լուների դիցարանութեան մէջ քամու աստուածն էր:

նակները, իրանց անակնկալ նոտաներով, որոնց արտայայտելիքը կարելի է լրացնել ձեռքի, զլիմի կամ մէջքի շարժումներով, բայց նա չէր համարձակում խոստովանել այդ՝ իր սիրահալ ուսուցչունուն: Սակայն պէտք է ասել, որ, թէկ օրիորդ կը Միրի արհեստանոցում շատ էին երգել տուել նրան, նրա ձայնը գեռես մատղաշ էր և բաւական սիրուն:

Շատ քիչ ծանօթութիւններ ունենալով, նա վերջ ի վերջոյ մտերմացաւ իր երգեցողութեան ուսուցչունու հետ նա պահում էր նրան նախաճաշին, իրանց նոր կառքով զրօննելու էր տանում, նրա հետ էր գնում զգեստեղին ու զուզուեղին առնելու: Տիկին Դօրսօնի սանտիմէնտով և կարեկից բնաւորութիւնը արամազրում էր զարդնասացութիւն: Նրա մշտական արտունջները իր բախտից կարծես ուզում էին նոյնպիսի արտունջներ գուրս քաշել նաև ուրիշների բերնից: Եւ Սիրունին պատմեց նրան Ժօրժի և իր սիրոյ մասին, մեղմացնելով իր մեղքը իր ծնողների անգիտութեամբ, ասելով, իրը թէ նրանք բռնի կերպով ամումնացրել էին իրան իրանից շատ աւելի տարիքով մարդու հետ, նրա հարստութեան պատճառով: Դօրսօնը իսկոյն և եթ պատրաստականութիւն ցոյց տուեց օգնելու նրան ու Ժօրժին: Իր ծառայութիւնները ծախելու ընդունակ չէր այդ փոքրիկ ամերիկուհին, բայց նա մի տեսակ սէր էր տածում դէպի սիրահարութիւնը, միևն հաճոք էր զգում սիրային ուսմաններից: Դժբախտ լինելով իր ընտանեկան կեանքում, որովհետեւ ամուսնացել էր մի տատամարոյժի հետ, որ նրան ծեծում էր յաճախ, նա այնպիսի կարծիք էր կազմել, թէ բոլոր կնատեր տղամարդիկ մի մի հրէշներ են, և մանաւանդ զարհուրելի բռնակալ էր թւում նրան իսեղն Ռիսլէրը, որին, նրա համոզմունքով, Սիրունին կատարեալ իրաւունք ունէր ատելու և զաւածանելու:

Եռանգուն և վերին աստիճանի օգտակար արբանեակ էր նա: Շաբաթը երկու, երեք անգամ օթեակի տումակ էր բերում գնալու օպէրա կամ իտալական խմբի ներկայացումներին և կամ այն փոքրիկ յաջողակ թատրոններից մէկը, որոնք մի սէզնի ընթացքում գրաւում են ամբողջ Պարիզը: Ռիսլէրը կարծում էր, թէ տիկին Դօրսօնը ինչքան տոմսակ ուզէր՝ կարող էր ճարել երգեցիկ թատրոններում և ուրեմն նա էր հրաւիրողը: Թշուառականը չէր իմանում, որ մօղային պիէսների այդ առաջնեկ ներկայացումների օթեակներից ամենաչժանը յաճախ տասը, տասնհինգ լուեդօր *): Էր նստում իր առևտրակցին: Ճիշտ որ շատ հեշտ էր խարել այդպիսի մի ամուսնու: Նրա անսպառ

*) Լուեդօր=20 Գրանկ=7 և 50 կ.:

գիւրահաւատութիւնը հալած իւղի տեղ էր ընդունում բոլոր սուտերը. բայցի այդ էլ խեղճը ամեննին չէր ճանաչում այն շրջանի շինծու կեանքը, ուր իր կինը արդէն սկսել էր աչքի ընկնել. նա ոչ մի տեղ չէր գնում կնոջ հետ. Ամուսնութեան սկզբի ժամանակները մի քանի անգամ նա գնացել էր հետը թատրոն, բայց այնտեղ խայտառակ կերպով քնել էր, չափազանց պարզ լինելով հանդիսատեսներով զբաղուելու համար և չափազանց դանդաղողի լինելով ներկայացմամբ հետաքրքրուելու համար. Ուստի, նա անհունապէս չնորհակալ էր տիկին Դօրսօնից, որ նա փոխարինում էր իրան Սիդօնիի կողքին: Եւ որքան պատրաստականութեամբ էր այդ անում տիկին Դօրսօնը:

Երեկոյեան, երբ Սիդօնին դուրս էր գնում տանից, միշտ շքեղ պճնուած, Ոխտէրը զմայլուած դիտում էր նրան, չիմանալով, թէ որքան արժեն այդ հագուստները, ոչ էլ մանաւանդ այն, թէ ով է եղել այդ արժէքը վճարողը, ու ազատ որ և է կասկածից, նա հանգիստ սպասում էր նրան, բուխարու մօտ նստած զծագրութեամբ պարապելով և գոհ սրտով ինքն իրան ասելով՝ «Ի՞նչ ուրախ ժամանակ է անցկացնում երեխ Սիդօնիս»:

Մի յարկ ներքե, ֆրօմօնների մօտ, նոյն կատակերգութիւնն էր տեղի ունենում, բայց գերերը թարսած: Այդտեղ կինն էր բուխարու մօտ նստած սպասում: Ամեն երեկոյ, Սիդօնիի գնալուց կէս ժամ յետոյ, մնե դարպասը նորից բացւում էր ճանապարհ տալու համար ֆրօմօնների կառքին, որով պ. ֆրօմօնը գնում էր իր ժողովարանը: Ի՞նչ արած: Առետուրը իր պահանջներն ունի: Խոշոր գործերը ժողովարանումն են սրբուում, թղթախաղի սեղանի շուրջը, և ով չի ուզում իր առետարական տան նշանակութիւնը վայր գցել պէտք է անպատճառ գնայ այնտեղ: Կէրը միամտաբար հաւատում էր այդ հէքեաթներին: Ամուսնու գնալուց յետ նա մի ըստէ տիրութիւն էր զգում: Որքան ուրախ կը լինէր նա, եթէ ժօրքը տանը մնար կամ թև թեւքի տուած միասին դուրս գային զրօննելու, զուարձանալու: Բայց հէնց որ աչքը ընկնում էր երեխայի վրայ, որ ճիվլում էր կրակի առաջ և ոսները խաղացնում շորերը հանելիս, սիրտը խկոյն հանգստանում էր: Վերջապէս առետարականների բերնում պետական շահերի կշիռ ունեցող «գործեր» բառը միշտ պատրաստ էր նրան համոզելու համար, որ պէտք է հպատակուել անհրաժեշտութեան:

Ժօրժն ու Սիդօնին հանդիպում էին իրար թատրոնում: Եւ այդտեղ ամենից առաջ յագուրդ էր ստանում նրանց մնափառութիւնը: Շատ էին դիտում նրանց: Սիդօնին այժմ յիշրաւի գեղեցիկ էր և նրա սիրուն կերպարանքը, որ կատարեալ

տպաւորութիւն գործելու համար պէտք է անպատճառ զարդարուած լինէր բոլոր տարօրինակ մօդային պճնանկներին, որ կարծես յատկապէս նրա համար հնարուած լինէին նրանք: Մի քիչ անցած նրանք գնում էին և օթեակում մնում էր մենակ տիկին Դօրսնը: Ավենի Փարբիէլում, Champs—Elysées-ի կոր հրապարակի վրայ, նրանք փարձել էին մի փոքրիկ բնակարան,—ինչպէս երազում էին օրիորդ լը Միրի արհեստանոցի աղջիները, —բաղկացած երկու շենք և հանգիստ սենեակներից, ուր հարուստ թաղբրի լուսութիւնը, որ խանդարում են միմիայն հաղուագէպ կառքերը, պամաջելի միջնորդ էր կազմում նրանց սիրոյ համար: Քիչ քիչ, վարժուելով իր յանցանքին, Սիդօնին սկսեց յանդուցն և օտարութիւնը բանել: Իր աշխատաւոր օրերից նա պահել էր մըտքումը հոչակաւոր ճաշարանների և պարերեկոյթների անուններ, և այժմ հետաքրքրուում էր գնալ այդ տեղերը, ինչպէս նաև մեծ զուարձութիւն էր զգում, երբ նրա առաջ կրունկի վրա բաց էին անում գոները զգեստեղինի մեծ արհեստանոցները, որոնց մասին իր ամբողջ կեանքում նա գաղափար ունէր միմիայն ցուցանակներից: Որովհետև նա ամենից առաջ այդ սիրոյ մէջ ուղում էր գտնել մի միջոց իր պատանեկութեան ստորացումների ու նեղութիւնների տեղը հանելու: Ոչ մի բան, օրինակ, նրան այնքան զուարձութիւն չէր պատճառում Բուլօննեան անտառում կատարած գիշերային զրոսանքից կամ թատրոնից վերադառնալիս, որքան մի ընթրիք Անգլիական սրճարանում, շըրջապատռած անբարոյական զեխութեան արմուկով: Այդ մշտական շրջադարձութիւններից նա տուն էր բերում խօսելու և իրան պահելու նոր ձեւեր, անվայել տաղեր և հագուստի ձեզեր, որոնք այդ հին առեստրական տան բուրժուա միջնորդութիւն էին այդ ժամանակուայ պարիզեան կօկոտների խկական և օտարութիւն պիմաստուերը:

Գործարանում արդէն սկսել էին կասկածներ տանել: Հասարակ կանայք, նոյն իսկ ամենից աղքատները, երսելի քննադատներ են, երբ հարցը գալիս է հագուստին... Երբ տիկին նիստը ժամի երեքին մօտ զուրս էր գալիս տանից, յիսուն զոյգ պայծառ ու նախանձու աշքեր, դարան մտած արհեստանոցի պատուհաններում, դիատում էին նրան անցնելիս, թափանցելով նրա յանցաւոր խղճի խորքը, նրա սե թաւիչէ գոլմանի և շողշողուն սե սաթերով զարդարուած իրանոցքի միջավ:

Նա չըր նկատում, որ իր խենթ զիմի բոլոր գաղանկիները թրվում էին նրա: Չուրջը, ինչպէս այն ժապաւէնները, որոնք սաւառնում էին նրա բաց ծործորակի վրայ, և տասը կոճակաւոր

բրօնզագոյն նուրբ կօշիկները ման զալիս զանազան պատմութիւններ էին անում, նկարագրելով նրանց կատարած տեսակ տեսակ գաղտնի շրջագայութիւնները, այն գորգազարդ սանդուինները, որոնցով նրանք անցնում էին գիշերները ընթրիքի գնալու համար, և այն տաք մուշտակները, որոնց մէջ նրանք փաթաթում էին, երբ կառքը պտոյտ էր գործում. Ճի շուրջը լապտերների շողբով ընթիջուած ստուերի մէջ:

Բանուորուհիները քրքջում էին ու քչփշում «Մէկ նայեցէք այս նարմանազուկին... Տեսէք, թէ ինչ տեսակ է հագնւում տանից դուրս գալու համար... Ինչ ասել կուզի, որ եկեղեցի գնալու համար չէ, որ այդպէս զուգուել է... Ո՞վ կը հաւատայ, որ երեք տարի էլ չը կայ, որ ամեն առաւօտ արհեստանոց էր գնում վատէրպուֆը հագին և երկու սույի խորոված շագանակ լցրած գրպանները ձեռքերը տաք պահելու համար... Հիմի մոտիկ արեք, թէ ինչպէս է բազմել սեփական կառքի մէջ...»: Եւ մագնէզիախառն կայծքարի փոշու և ամառ ձմեռ հրաշէկ վառանների փոնչոցի մէջ աշխատող խեղճ աղջիկներից շատերը մտածում էին բախտի այն խաղերի մասին, որոնց չնորհիւ այդպիսի յանկարծական փոփոխութիւններ են մտնում մի կոտը կեանքի մէջ, և սկսում էին երագել մի անորոշ չնաշխարհիկ ապագայի մասին, որ թերևս նրանց ևս սպասում էր, առանց իրանց իմանալուն:

Ամենքն էլ այն կարծիքին էին, որ Սիդոնին դաւաճանում է Ռիսլէրին: Տպագրական արհեստանոցում բանող երկու բանուորներ, Folies Dramatiques-ի երկու մշտական յաճախորդներ, ասում էին, թէ իրանք մի քանի անգամ տեսել էին տիկին Ռիսլէրին այդ թատրոնում մի պարոնի հետ, որ թագնւում էր օթեակի խորքում: Աշխալ քեսին էլ զարմանալի բաներ էր պատմում... Որ Սիդոնին սիրական ունէր, նոյն իսկ մի քանի սիրականներ, այդ անկասկած էր ամենքի համար: Միայն թէ դեռ ոչ ոքի մտքով չէր անցնում, թէ այդ սիրականը կարող է ժօրժ Ֆրոմօնը լինել:

Սակայն Սիդոնին ամենեին խոհեմութիւն չէր պահպանում նրա հետ ունեցած յարաբերութիւնների մէջ: Ընդհակառակը, կարծես նա մի տեսակ ցուցամոլութիւն էր մտցնում այդ քանի մէջ, և գուցէ հէնց այդ էր նրանց փրկողը: Քանի-քանի անգամ էր պատահել, որ նա յանդգնաբար կանգնեցրել էր ժօրժին պատշգամբի վրայ՝ երեկոյեան ժամադրութեան մասին պայմանաւորուելու համար: Քանի-քանի անգամ էր պատահել, որ նա դող էր աղջել ժօրժին, երես առ երես խօսելով նրա հետ քուլորի աջքի առաջ: Ապշութեան առաջին բովէից յետոյ ժօրժը նոյն իսկ չնորհակալ սրտով էր վերաբերում նրան այդ յան-

դուզն վարմունքի համար, որ վերագրում էր նրա սիրոյ սաստկութեանը: Սակայն նա սխալուում էր:

Սիրօնիի ուղածը իսկապէս, թէս ինքն էլ այդ լաւ չէր գիտակցում, այն էր, որ Կլէրը նրանց նկատէր, որ նա իր պատուհանի վարագոյրի արանքից նայէր նրանց վրայ և նրա սըրտում մի կասկած ծագէր իրանց յարաբերութիւնների մասին: Իր ախոյեանի սրտի անհամապառութիւնն էր միայն պակաս, որպէս զի Սիրօնին լիովին երջանիկ զգար իրան: Բայց նրա աշխատանքը զուր էր, Կլէր Ֆրօմօնը ոչինչ չէր նկատում և Ռիսլէրի սրտի նման նրա սիրտն էլ անդորր էր ու անվրդով:

Միմիայն ծերունի դանձապահ Սիրիզմունդն էր արդարեանհանգիստ: Սակայն նրա մտահոգութեան առարկան էլ Սիրօնին չէր, երբ, զրիչը ականջի յետեր իրած, նա մի բոպէ կանգ էր առնուում իր հաշիւնների ժամանակ և իր վանդակակապատի միջով աչքերը յառում փոքրիկ պարտէղի թրջած գետնին: Նա մտածում էր միայն իր պատրօնի, պ. Շօրչի մասին, որ այժմ շատ փող էր վերցնում դրամարկղից իր ընթացիկ ծախսների համար և խառնաշփոթութիւն էր քցում նրա բոլոր հաշուեգրքերի մէջ: Ամեն անդամ մի նոր պատրուակ էր գտնում Ժօրժը: Նա մօտենում էր դրամարկղի պատրհանին անհոգ կերպարանքով:

«Մի քիչ փող կը գտնուի մօտեներդ, սիրելի Պլանուս... Երէկ երեկոյ գարձեալ ինձ քաղկեցին թղթախաղում. չեմ ուզում այդպիսի մի չնչին գումարի համար բանկը ուղարկել»...

Սիրիզմունդ Պլանուսը, կարծես ափսոսալով, բանում էր դրամարկղը Ժօրժի ուղած գումարը տալու համար և սարսափով մտաբերում էր այն օրը, երբ Ժօրժը, որ այն ժամանակ գեռ քան տարեկան էր միայն, եկաւ խոստովանուելու իր հօրեղբօրը, որ պարագով մի քանի հազար ֆրանկ էր տարուել թղթախաղում: Այդ բաւական էր, որպէս զի ծերունի գանձապահը ատելութիւն զգար դէպի ժողովարանը և արհամարհանք դէպի նրա բոլոր անդամները: Եւ երբ մի օր այդ անդամներից մէկը, մի հարուստ վաճառական, եկել էր գործարան, նա ասաց նրան բիրտ միամստութեամբ.

— Թող ջնաննամը գնայ ձեր Շատո-դ'Օյի ժողովարանը... Պ. Ժօրժը այս երկու ամսուայ մէջ երեսուն հազար ֆրանկից աւելի փող է տարուել ձեղնում:

Վաճառականը սկսեց ծիծաղել.

— Սխալ էք, սիմալ քեոի Պլանուս... ամենաքիչը երեք ամիս կը լինի, որ ձեր պատրօնի երեսն էլ չենք տեսել մեր ժողովարանում:

Գանձապահը լոեց, բայց նրա մէջ ծագեց մի սարսափելի միսք, որ ամբողջ օրը հանգիստ չէր տալիս նրան:

Եթէ ժօրժը ժողովարան չէր գնում, հապա որտեղ էր լինում նա երեկոները, որտեղ էր ծախսում այդքան փող:

Անկասկած էր, որ ինչ որ կին կար խառը այդ բանում:

Հէնց որ այդ կասկածը զարթնեց նրա մէջ, նրա սիրար դող ընկաւ իր դրամարկլի համար: Այդ թէրն կանտօնից եկած ծեր արջը, որ ամուրի էր մնացել իր ամբողջ կեանքում, սարսափելի ահ էր զգում կանանցից ընդհանրապէս և պարիզուհիներից մասնաւորապէս: Առաջ ու առաջ, խիզը հանգստացնելու համար, նա իր պարտականութիւնը համարեց նախազգուշացնել Ոխլէրին: Սկզբում անորոշ կերպով խօսեց.

—Շատ փող է ծախսում պ: Շօրշը, ասաց նա մի օր Ոխլէրին:

Ոխլէրի վրայ այդ ոչ մի ազդեցութիւն չարեց:

—Ի՞նձ ինչ, սիրելի Սիդիզմունդ, իր փողն է:

Եւ այդ նրա անկեղծ համոզմունքն էր: Նրա աչքում ֆրօմոն կրտսերը առևտրատան բացարձակ տէրն էր: Ինչի՞ նման կը լինէր, եթէ ինքը, ֆրօմօնների նախկին գծագրիչը, թոյլ տար իրան նկատողութիւններ անելու նրան: Գանձապահը այլ ևս սիրտ չէր անում խօսել այդ հարցի մասին, մինչև որ մի օր մի շալավաճառ մեծ առևտրական տնից վեց հազար ֆրանկի մի հաշիւ բերեցին նրան մի քաշմիրի շալի համար:

Նա գնաց ժօրժի գրասենեակը:

—Պէտք է վճարել, պարոն:

Ժօրժ ֆրօմօնը մի քիչ այլայլուեց: Սիդօնին մոռացել էր նախազգուշացնել նրան այդ նոր առքի մասին, նա այլ ևս չէր քաշուում ժօրժից:

«Վճարեցէք, վճարեցէք, քեռի Պլանուս...», ասաց նա մի քիչ շփոթուելով և յետոյ աւելացրեց: «Ֆրօմօն կրտսերի հաշուի մէջ մացրէք այդ... Ինձ ինդրել էին կատարել այդ յանձնարարութիւնը...»:

Այդ երեկոյ գանձապահ Սիդիզմունդը, իր փոքրիկ լամպը վառելիս, տեսաւ, որ Ոխլէրն անցնում է պարտէզով, և, լուսամուտը թիսթիսկացնելով, կանչեց նրան իր մօտ:

—Պատճառը մի կին է, ասաց նա նրան ցած ձայնով... Այժմ ևս ապացոյց ունեմ...

Երբ խեղճ մարդը արտասանում էր այդ «կին» սարսափելի խօսքը, նրա ձայնը դողդողում էր երկիւղից, կորչելով գործարանի՝ ժխորի մէջ: Նրա ապատող աշխատանքի աղմուկը այդ բոպէին չարագուշակ էր թւում թշուառ գանձապահին: Նրան

թւում էր, թէ այդ բոլոր շարժուն մեքենաները, փաթիլ-փաթիլ գոլորչի ժայթքող ահազին ծինելոյզը, հազար ու մի տեսակ աղմկալից աշխատանքով զբաղուած բանուորհները, այդ բոլորը դղրդում էին, ճգնում էին և յոդնում միմիայն մի թաւշապատ ու գոհարագարդ խորհրդաւոր կանացի էակի համար:

Ոիսլէրը ծիծաղեց նրա վրայ, հաւատ շընծայելով նրա կասկածներին: Նե վաղուց ի վեր գիտէր իր հայրենակցի հիւանդութիւնը—կնոջ կորստաբեր աղեցութիւն տեսնել ամեն բանի մէջ: Բայց և այնպէս Պլանուսի խօսքերը երբեմն-երբեմն նրա միաքն էին գալիս, մասնաւանդ երեկոները, այն միայնակութեան րոպէներին, երբ Սիդօնին տիկին Դօբասնի հետ թատրոն էր գնում, նախապէս անազին աղմուկ բարձրացնելով զուգուելու գարդարուելու ժամանակ և յետոյ բոլորովին ամայացած թողնելով բնակարանը, հէնց որ նրա զգեստի երկար տուաը անցնում էր շէմքի այն կողմը: Մոմերը վառում էին հայելիների առաջ և զգեստեղէնի մանր մունր պարագաները, ցիր ու ցան թափուած այստեղ ու այնտեղ, պատմութիւններ էին անում օտարուի քմահանոյքների և չափազանց մեծ ծախսերի մասին: Ոիսլէրը ոչինչ չէր տեսնում այդ բոլոր բաներից, միմիայն, երբ նա լըսում էր ժօրժի կառքի գոռոցը բակում, մի տեսակ սրտնեղութիւն և սառնութիւն էր զգում, մտածելով, որ ներքեմ յարկում տիկին Ֆրօմօնը երեկոները մէն-մննակ է մնում: Խեղճ կին: Իսկ եթէ յանկարծ ճիշտ լինէր Պլանուսի ասածը... Եթէ գուրս գար, որ ժօրժը մի ուրիշ ընտանիք ունի քաղաքում... Օ՛, սոսկալի բան կը լինէր այդ:

Այն ժամանակ, փոխանակ ժամանելու աշխատելու, նա, կամացուկ իջնելով ներքեւ, հարցնում էր, արդեօք կարելի՞ էր տեսնել տիկինոջը, և իր պարտականութիւնն էր համարում ժամանակ անցկացնել նրա հետ:

Երեխան արդէն քնած էր լինում, բայց նրա փոքրիկ գուխանոցն ու կապոյտ մաշիկները ընկած էին լինում կրակարանի առջև զանազան խաղալիքների հետ: Կէրը կարդում էր կամ աշխատում, իսկ մայրը, կողքին լուռ նստած, շարունակ եռանդուն կերպով պատում ու սրբում էր զանազան բաներ, չնչասպառ փշելով իր ժամացոյցի տուփի վրայ և տաս անգամ միմնոյն բանը ջղացին շարժումով դնելով միենայն տեղը, սկսուող մայութեան յատուկ յամառութեամբ: Խեղճ Ոիսլէրն էլ մի երկելի ուրախ խօսակից չէր, բայց այդ չէր խանգարում տիկին կէրին սրտագին կերպով ընդունելու նրան: Նա գիտէր, թէ ինչեր էին խօսում Սիդօնիի մասին գործարանում, և թէպէտ նա իր լածի կէսին էր միայն հաւատում, այնուամենայնիւ նրա սիրտը հմըլ-

ւում էր, երբ տեսնում էր այդ խեղճ մարդուն, որին այնքան յաճախ մենակ էր թողնում իր կինը: Այդ փոխադարձ կարեկցութիւնն էր կազմում նրանց յարաքերութիւնների հիմքը և չափից վեր սրտաշարժ տեսարան էին ներկայացնում այդ երկու բարձիթող արուած էակները, որոնք փոխադարձաբար խղճում էին միմեանց և աշխատում էին սփոփել իրար:

Նստելով հիւրասենեակի մէջ տեղը գրուած այդ պայծառ լուսաւորուած փոքրիկ սեղանի մօտ, Ռիսլէրը փոքր առ փոքր սկսում էր համակուել ընտանեկան մթնոլորսի ջերմութեամբ, շրջապատող իրերի ներդաշնակութեամբ: Նա տեսնում էր այնտեղ այն կահկարասկը, որ ճանաչում էր քսան տարուց ի վեր, տեսնում էր իր նախկին պատրօնի պատկերը, և իր սիրելի տիկինն «Շօրչը», որ նրա կողքին կուցած ինչոր մանրակար էր անում, նրան աւելի ևս ջահէլ և սիրասուն էր թւում այդ հինաւուրց յիշատակների մէջ: Երբեմն՝ երբեմն ափկինը վեր էր կենում գնում ակն տալու կողքի սենեակում քնած երեխային, որի թեթև շրնչառութիւնը լսում էր լուսութեան րոպէներում: Առանց ինքն իրան հաշիւ տալու այդ բանում, Ռիսլէրը իրան աւելի լաւ, աւելի ջերմ էր զգում այդտեղ, քան իր բնակարանում, որովհետեւ լինում էին օբեր, երբ իր սիրուն կացարանը, որի գուար ամեն ժամ բաց ու խուփ էր լինում շտապ-շտապ դուրս գնացող ու տուն եկող Սիդնիի համար, նրա վրայ այնպիսի տպաւորութիւն էր զործում, ինչպէս մի ծածկաւոր, բայց անդուռ ու անպատուհան շուկայ, մատնուած աշխարհիս չորս ծագի քամիներին: Նրա կացարանը բանակի տեղ էր, այստեղ՝ բնակութեան: Մի հոգատարձեռք կարգ ու չնորհք էր մտցնում այս կացարանի բոլոր մասերում: Շրջանաձև շարուած աթուները կարծես ցած ձայնով զրոյց էին անում իրար հետ, կրակը սքանչելի կերպով ճտճտում էր գառուելիս և կլէրի աղջկայ փոքրիկ զլխանոցը իր կապոյտ ժապաւէնների բոլոր հանգոյցներում պահպանած էր լինում երեխայական քաղցր ժպիտների ու անմեղ հայեացքների նշոյլներ:

Եւ այն ժամանակ, մինչ կլէրը մտածում էր, որ այդպիսի մի հիանալի մարդ արժանի էր մի աւելի լաւ կին ունենալու, Ռիսլէրը, տեսնելով իր կողմը դարձած այդ մեղմ ու գեղեցիկ դէմքը, այդ ներողամիտ ու խելացի աչքերը, հարցնում էր մըտքում, թէ որ փուչ-փշանալու կնոջ համար էր ժօրժ Ֆրօմծնը մենակ թողնում այս պաշտելի էակին:

VI

Հաւուեկօփոք

Ծեր Պլանուսը բնակւում էր Մօնոպուժում մի տան մէջ, որ գտնւում էր այն տան կողքին, ուր մի ժամանակ ապրում էին Շէրերը։ Այդ տունն էլ բաղկացած էր երեք պատուհանաւոր գետնայարկի վրայ շինուած մի հատ վերնայարկից և նոյնպէս ունէր ցանցած ցանկապատով մի փոքրիկ պարտէզ, եղերուած դալար տօսախներով։ Ծերուկ գանձապահը կենում էր այնտեղ իր քրոջ հետ։ Առաւօտեան նա գնում էր քաղաք առաջին հանրակառքով, ճաշին վերադառնում էր տուն և կիրակիրները մնում էր տանը ու զբաղւում իր ծաղիկներով ու հաւերով։ Պառաւած քոյրը կառավարում էր տունը, եփում-թափում էր, կար ու կարկատան էր անում։ Դժուար էր գտնել աւելի բախտաւոր զոյք։

Երկուսն էլ անպսակ, նրանք կապուած էին իրար հետ միատեսակ ասելութեամբ դէպի ամուսնութիւնը։ Քոյրը գարշում էր բոլոր տղամարդիկներից, եղբայրը կասկածով էր վերաբերում դէպի բոլոր կանայք։ Բայց և այնպէս նրանք պաշտում էին միմեանց, մէկը միւսին բացառութիւն համարելով իր սեռի ընդհանուր փչութեան մէջ։

Եղբօր մասին խօսելիս քոյրը միշտ ասում էր՝ «իմ եղբայր պարոն Պլանուսը», եղբայրն էլ նոյն հանգիսաւոր եղանակով ամեն նախադասութեան սկզբին կամ վերջին կպցնում էր՝ «իմ քոյր օրիորդ Պլանուսը»։ Այդ երկու ամաչկոտ ու միամիտ էակների աչքում Պարիզը, —որ նրանք չէին ճանաչում, չը նայած որ ամեն օր անց էին կենում միջովը, —մի որջ էր երկու սեռի հրէների, որոնք ամեն ջանք թափում էին, որպէս զի որքան կարելի է շատ չարիք հասցնեն իրար, և երբ նրանց ականջին հասնում էր մի լուր ընտանեկան օր և է դրամայի մասին, մի պառաւական բամբասանք, նրանք, իրանց հայեացքների տարբերութեան համաձայն, տարբեր անձանց էին մեղաւոր համարում։

—Մեղքը մարդունն է, ասում էր «իմ քոյր օրիորդ Պլանուսը»։

—Մեղքը կնոջն է, առարկում էր «իմ եղբայր պարոն Պլանուսը»։

—Օ՛, տղամարդիկի...

—Օ՛, կինարմատաների...

Եւ այդ էր նրանց վէճերի մշտական նիւթը պարապութեան

այն հազուադէպ ժամերին, երբ ծեր Սիդիզմունդը հանգստանում էր աշխատանքով լի և իր հաշուեզրերի նման կանոնաւոր դասաւորուած օրուայ ընթացքում: Մի ժամանակից ի վեր քոյր ու եղբայր սկսել էին առանձնապէս տաք վիճել: Գործարանում անցած դարձածը աստիկ զբաղեցնում էր նրանց: Քոյրը խղճում էր տիկին Ֆրոմենին և վերին աստիճանի անարդ էր գտնում նրա ամուսնու վարմունքը. ինչ վերաբերում է Սիդիզմունդին, նա բաւականաչափ կծու խօսք չէր գտնում բնորոշելու համար այն անյայտ անպիտան կնոջը, որ վեց հազար Գրանկանոց շալիքի հաշիւ էր ուղարկում իրան՝ դրամարկղից վճարելու: Նրա համար գլխաւոր հարցը նրանումն էր, որ վասնգւում էր այդ հին առևտրական տան վառքն ու պատիւը, ուր ինքը ծառայում էր երիտասարդութիւնից ի վեր:

—Ի՞նչ է լինելու մեր գրութիւնը... ասում էր նա շարունակ... Օ՛, կինարմատներ...

Մի օր օրիորդ Պլանուար բուխարու առաջ նստած գուլպա էր գործում, սպասելով իր եղբօրը:

Կէս ժամ կը լինէր արդէն, որ հացը քցած էր, և պառաւ օրիորդը սկսում էր անհանգստանալ այդպիսի չը տեսնուած ուշցացումից, երբ Սիդիզմունդը ներս մտաւ, այլայլուած կերպարանքով և առանց մի խօսք ասելու, որ նրա կողմից բոլորովին անսովոր բան էր:

Նա սպասեց, մինչև որ դուռը լաւ փակուեց, ու յետոյ, նայելով քրոջ անհանգիստ ու հարցական դէմքին, ասաց ցած ձայնով.

—Նոր լուր ունեմ: Այժմ ես գիտեմ, թէ ով է այն կինը, որ մեր տունն աւերում է:

Եւ, փոքրիկ սեղանսատան համը կահ-կարասիքին աչք ածելուց յետոյ, աւելի ես ցած ձայնով արտասանեց մի այնպիսի տարօրինակ ու անսպասելի անուն, որ օրիորդ Պլանուար երկու անգամ կրկնել տուեց նրան:

—Կարելի բան է միթէ:

—Կասկած չը կայ:

Եւ, չը նայելով իր անկեղծ վշտին, Սիդիզմունդը գրեթէ յաղթական կերպարանք ունէր:

Պառաւ օրիորդը չէր կարողանում հաւատալ լսածին... Այնքան բարեկիրժ, այնքան քաղաքավարի մի տիկին, որ այն աստիճան սրտագին ընդունելութիւն էր ցոյց առւել իրան... Միթէ կարելի էր ենթադրել այդպիսի բան նրա կողմից:

—Ապացոյցներ ունեմ... ասաց Սիդիզմունդը:

Ու պատմեց, թէ ինչպէս Աշիլլ քեռին մի օր, երեկոյեան

ժամի տասն ու մէկին, պատահել էր ժօրժին ու Սիդոնիին այն վայրկեանին, երբ նրանք մտնում էին Մօնմարտր թաղի փոքրիկ հիւրանոցներից մէկը: Խոկ քեռի Աշխլին վաղուց էին ճանաշում: Նա սուտ ասող մարդ չէր: Բացի այդ, ուրիշներն էլ նրանց տեսել էին այդպիսի տեղերում: Գործարանում այլ ևս խօսակցութեան ուրիշ առարկայ չունէին: Միայն Ռիոլէրն էր, որ ոչնչի մասին կասկած չէր տանում:

—Եթէ այդպէս է, ձեր պարտականութիւնն է նախազգուշացնել նրան, յայտարարեց օրիորդ Պանուսը:

Գանձապահը մտահոգ կերպարանք ստացաւ:

—Նատ փափուկ խնդիր է... Նախ և առաջ, ով գիտի, կը հաւատայ արդեօք ասածիս: Այն աստիճան կուրացած կոյրեր կան, որ... Եւ վերջապէս, երկու առեւտրական ընկերների մէջ խցկուելով, ես կարող եմ շատ հեշտ դրկուել պաշտօնիցա... Օ՛, կանայք... կանայք... Եւ սակայն որբան բախտաւոր կարող էր լինել Ռիոլէրը: Երբ եղբօր հետ բերել տուեցի Շվեյցարիայից, մի սու չը կար գրամնումը, իսկ այսօր Պարիզի ամենասառաջին առեւտրական տան տէրներից մէկն է... Կարծում էիր, համովիստ կը նստի... Ի՞նչպէս չէ... Պէտք է որ պարոնս ամուսնանայ... Կարծես թէ մարդ կը մեռնի, եթէ չամուսնանայ... Եւ այն էլ ամուսնանում է մի պարիզունու հետ, այն աջ ու ձախ շաղ տուող կանանցից մէկի հետ, որոնք տնաքանդութիւն են մի ազնիւ առեւտրական տան համար, մինչդեռ նա ձեռքի տակ ունէր մի արի աղջիկ, գրեթէ հասակակից իրան, մի հայրենակից, աշխատանքի սովոր և ամուր կազմուածքով...

«Եմ քոյր օրիորդ Պանուսը», որի կազմուածքին էր վերաբերում այդ ակնարկը, հիանալի առիթ ունէր բացականչելու, «Օ՛, տղամարդիկ... տղամարդիկ!...», բայց լուռ մնաց: Նատ փափուկ հարց էր այդ, և ով գիտի, գուցէ արդարե, եթէ Ռիոլէրը այն ժամանակ ուզած լինէր, միակ տղամարդը կը լինէր...

Ծեր Սիդիկմունգը շարունակեց.

—Եւ տեսէք թէ ինչ գրութեան ենք հասել... Երեք ամսից ի վեր, որմաթղթերի առաջին գործարանը Պարիզում կախուած է այդ չնչին արարածի փէշերից: Պէտք է տեսնել թէ ինչպէս են հալւում փողերը: Ամբողջ օրը բան ու գործս այն է որ դրամարկղը բաց եմ անում պ: Ժօրժի պահանջած գումարները տալու համար: Միշտ ինձ է դիմում, որովհետեւ եթէ իր բանկիրից վերցնէր, շատ աչքի կ'ընկնէր, միշտեռ դրամարկղում փողը շարունակ գալիս գնում, աւելանում, պալիսում է... Բայց հաշուեկշիռը գլխներիս կանգնած է... Ի՞նչ եմ ասել, հիանալի բան: Կը լինեն գրանց հաշիւները տարուայ վերջին... Ամենասարսափե-

լին այն է, որ Ռիսլէր աւագը խօսք անգամ չի ուղում լիեւ Քանի քանի անգամ նախազգուշացրել եմ իրան. «Զգնյշ կաց, պարսն ժօրժը խենթութիւններ է անում այդ կնոջ համար...»; Կամ հեռանում է ուսերը թափ տալով կամ թէ ասում է, թէ այդ իրան բանը չէ, որովհետև գործարանի տէրը Ֆրօմօն կրտսերն է... Խաչը, քիչ է մնում մարդ կարծի... քիչ է մնում մարդ կարծի...»

Գանձապահը չը վերջացրեց նախաղասութիւնը, բայց նրա լուսաթեան տակ շատ թագուն մտքեր էին զգացւում:

Պառաւ օրիորդի սիրտը այրւում էր կակծից, բայց, ինչպէս առհասարակ անում է կանանց մեծամասնութիւնը այդպիսի գէպքերում, փոխանակ չարիքին մի դարման վնասնելու, նաև մոլորւում էր հաղար ու մի յետանկատ ափսոսմների, ենթագրութիւնների և ախ ու վախերի մէջ... Ափսոն, որ աւելի շուտ չէին իմացել այդ, երբ Շէրերը գեռ նրանց հարեւաններն էին: Տիկին Շէրը շատ պատուական կին էր: Կարելի էր համոզել նրան, որ հսկէր Սիդոնիին, հետը լուրջ կերպով խօսէր:

—Ճիշտ որ, լաւ միտք է այդ, ընդհատեց նրա խօսքը Սիդիզմունդը... Լաւ կը լինի գնաք Մայլ փողոցը նրա ծնողներին նախազգուշացնելու: Սկզբում մոգովս անցաւ նամակ գրել ֆրանցին... Նա մեծ ազգեցութիւն ունէր եղբօր վրայ և կան բաներ, որ միայն նա կարող է ասել նրան... Բայց Ֆրանցը շատ հեռու է... Եւ բաղի այդ, սարսափելի բան կը լինէր, եթէ անհրաժեշտ լինէր գիմել այդ միջոցին... Խեղճ Ռիսլէր, սիրառ այնուամնայնիւ ցաւում է նրա համար... Չէ, էլի լաւն այն է, որ իմաց տանք տիկին Շէրին... Դուք յանձն կ'առնեք այդ բանը, քոյրիկ...

Վատանգաւոր յանձնարարութիւն էր: Օրիորդ Պլանուսը մի քանի առարկութիւններ արեց, բայց նա սովոր չէր երբէք հակառակել իր եղբօր կամքին, իսկ այն միտքը, որ նա կարող էր օգտակար լինել իրանց հինաւուրց բարեկամ Ռիսլէրին, վերջնականապէս կակլեցրեց նրան:

Իր փեսայի բարեհոգութեան չնորհիւ, պ. Շէրին յաջողել էր իրագործել իր նոր քմահաճ ծրագիրը: Երեք ամիս էր արդէն, որ նա բնակում էր իր հոչակաւոր վաճառանոցում, Մայլ փողոցում, և ամբողջ թաղը մնացել էր զարմացած, տեսնելով այդ խանութը, որի մէջ ապրանք չը կար, բայց որի փեղկերը բայցում էին առաւօտեան և փակում գիշերը, ինչպէս առհասարակ խոշորավաճառ խանութներում: Չորս կողմք զարակներ էր սարքել, նոր հաշուասեղան էր շինել առել և մի գաղտնա փակ դրամարկղ ու մի մեծ կշեռք: Մի խօսքով, պ. Շէրը ունէր

առևտորի համար անհրաժեշտ բոլոր տարրերը, առանց գեռ որոշակի իմանալու, թէ ինչ առևտուր է ընտրելու:

Նա մտածում էր այդ բանի մասին ամբողջ օրը, անվերջ յետ ու առաջ չափչիելով խանութը, որի մէջ թափթփուած էին ննջարանի մի քանի խոչոր կահ-կարասիներ, որոնք չէին տեղաւորուել խանութի յետեի սենեակում: Նա մտածում էր այդ հարցի մասին նաև իր գոան չէմքի վրայ, երբ, զրիչը ականջի յետեր խրած, մեծ ախորժանկով խորասուղուում էր պարիգեան առևտորի ժխորի մէջ: Վաճառատունների գործակալները գնում գալիս էին նմուշների տետրակները կոնատակերին, իրար յետերց անցնում էին ապրանքներ տեղափոխող սայերը, հանրակառեր, բեռնակիր մշակներ ու ձեռնասայլակներ, հարեան դոմների առաջ վայր էին բերում ու բաց անում ապրանքների բեռները և ճոթեղէնների ու հիւսազարդերի ծրաբները քաշ էին տրւում առուի ցեխում նախ քան մտնելը ներքնայարկ նկուղները, այդ գանձերով լի մութ հորերը, ուր ծլում է առևտրական աների հարստութիւնը,—և պ. Շէքը այդ բոլորը դիտում էր և հիանում, զմայլում:

Նա զուարձութիւն էր շնել իր համար գուշակել, թէ ինչ կայ հակերի մէջ, և առաջինն էր համում իրարանցումի տեղը, երբ մի որ և է բեռ ընկնում էր անցորդներից մէկի ոտքին կամ որ և է բեռնասայլի տաք ու անհամբեր ձիերը երկարուկ կառքը ծոռում էին և, փողոցի երկայնութեամբ կանգնեցնելով, խափանում էին անց ու դարձը: Բացի այդ, իբր անյաձախորդ մանրավաճառ, նա հազար ու մի ուրիշ միջոցներ ունէր ժամանակը ուրախ անցկացնելու համար, —տեղատարափ անձրե, զանազան պատահաքներ, գողութիւններ, կոիւներ...

Երեկոյեան դէմ պ. Շէքը, ուրիշների աշխատանքից շշմած, խլացած ու յոգնած, մեկնուում էր իր բազկաթոռի մէջ ու, ճակատի քրտինքը սրբելով, ասում կնոջը.

—Այ այսպիսի կեանք է հարկաւոր ինձ... գործունեայ կեանք:

Տիկին Շէքը մեղմ ժպտում էր, առանց ոչինչ պատասխանելու: Վարժուած իր ամուսնու բոլոր քմահաճոյքներին, նա կարողացածն պէս սարքուել էր խանութի յետեի սենեակում, —որ նայում էր մի մութ բակի, —միսիթարւում էր յիշելով իր ծնողների նախկին բարօրութիւնն ու աղջկայ հարստութիւնը և, միշտ մաքուր հագնուած, արդէն կարողացել էր շահել հայթայթիչների և հարեւանների յարգանքը:

Խեղճի ուղածն էլ միայն այնքանն էր, որ իրան չը խառնեն բանուորների կանանց հետ, որոնցից շատերը իրամից պակա

աղքատ էին, և որ ինքը կարողանար, չը նայելով բոլոր անհը-պաստ պայմաններին, պահպանել իր փոքրիկ բուրժուական դիրքը: Այդ նրա մշտական հոգմն էր, և նրա կացած սենեակը, ուր ժամի երեքին զիշերուայ նման մութն էր լինում, փայլում էր իր կարգ ու սարբով և մաքրութեամբ: Յերեկը մահճակալը ծալում, բազմոց էր դառնում, մի հին շալ քցւում էր սեղանի վրայ իրրի ծածկոց, հողմարդելքով ծածկուած բուխարին առաջ իրրի ծածկոց, հողմարդելքով ծածկուած բուխարին առանելցնի պահարանի տեղ էր ծառայում և ոտնաշնորուցիկի մեծութիւն ունեցող մի կրակարանի վրայ կամաց-կամաց եփ-ւում էին կերակուրները: Հանգստութիւնն էր միակ բաղձանքը այդ խեղճ կնոջ, որի գլխից ցաւն անպակաս էր չնործիւ իր ան-հանգիստ ամուսնու:

Հէնց սկզբի օրերից պ. Շէրը մի ոտնաշափ տառերով գրել էր տուել իր խանութիւն ճակատի թարմ ներկի վրայ.

Կօմմիսիօնէրուրին-Արտահանութիւն

Ինչի՞ կօմմիսիօնէրութիւն, ինչի՞ արտահանութիւն,—այդ չէր տառւած: Նրա հարեսնները շղարշ, մահուդ կամ կատ էին ծախում, իսկ նա արամադիր էր ծախել ամեն ինչ, առանց հաստատ իմանալու, թէ իսկապէս ինչ էր ծախելու: Ի՞նչքան դատողութիւններ էր ստիպուած լսել խեղճ կինը այդ հարցի մասին երեկոյեան պարապութեան ժամերին:

—Կտաւեղէնից ոչինչ չեմ հասկանուած, բայց մահուդեղէնի համար կարող եմ երաշխաւորել: Սակայն եթէ մահուդի գործ սկսեմ, մի շրջիկ գործակատար հարկաւոր կը լինի ինձ, որովհետեւ լաւ տեսակները Սէղանից ու էլքեօֆից են բերում: Նկարէն չթերի մասին չեմ խօսում, այդ ամառուայ բան է: Շղարշ ծախելն էլ անկարելի է, որովհետեւ սէղօնն անցնելու վրայ է:

Սովորաբար նա վերջ էր տալիս իր անվճառականութեանը, ասելով.

—Առաւոտուայ մտածածը խելօք կը լինի... գնանք քննելու եւ նա գնում էր քնելու ի մեծ մխիթարութիւն իր կնոջ: Երեք, չորս ամիս այցպէս ապրելուց յետոյ, պ. Շէրը սկսեց ձանձրանալ: Քիչ-քիչ վերսկսուեցին գլխացաւերը, աչքերի շաղուելը: Դուրս էր զալիս, որ քաղաքի այդ մասը աղմկալից էր ու անսոռող: Գործերն էլ լաւ չեն գնում: Ոչինչ չէր աջողուած, ոչ մահուդեղէնը, ոչ ճոթեղէնը:

Այդ նոր ճգնաժամի միջոցին էր, որ «իմ քոյր օրինորդ Պլանուաը» նրանց այցելութեան եկաւ Սիդօնիի հարցի առիթով:

Պառաւ օրինորդը ձանապարհին ինքն իրան ասում էր. «Պէտք է զգուշութեամբ խօսել...»: Բայց, ինչպէս բոլոր ամաշ-

կոտ մարդիկ, նա ամբողջ տոպրակը միանգամից թափ տուեց հէնց մանելու րոպէին, հէնց առաջին խօսքերով:

Բեմական էֆեկտ ստացուեց: Լսելով, որ իր աղջկան մնաղաղում են, տիկին Շէքը ոտքի կանգնեց, սարսափելի վրդովուած: Նա երբէք չէր կարող հաւատալ այդպիսի բանի: Նրա խեղճ Սիրոնին զոհ էր դարձել մի ստոր զրպարտութեան:

Պ. Շէքը շատ բարձրից սկսեց խօսել նրա հետ, ճոճուան խօսքերով, զլիի թափահարումներով, և, իր սովորութեան համեմատ, ամեն ինչ կապելով իր սեփական անձի հետ: Ի՞նչպէս կարող էին ենթադրել, որ նրա զաւակը, նախկին օրիորդ Շէքը, երեսուն տարուց ի վեր վաճառանոցում յայտնի պատկառելի մի առևտրականի աղջիկը, ընդունակ կը լինի այդպիսի մի... Ինչեր էք ասում, ում էք ուզում հաւատացնել:

Օրիորդ Պլանուար պնդեց իր ասածի վրայ, որովհետեւ նրա համար ծանր էր շատախօսի, թեթևսօլիկութեամբ վատ համբաւ ներ տանող-բերողի տեղ դրուել: Նա ասաց, որ հաստատ ապացուցներ կան, ասաց, որ այդ այլ ևս գաղտնիք չէր ոչ ոքի համար:

— Թէկուզ հէնց այդպէս լինի, բացականչեց պ. Շէքը, կատաղած այդ յամառութիւնից... Մեր ինչ բանն է դրանով զբաղուել: Մեր աղջիկը ամուսնացած է: Մեզնից հեռու է ապրում... թող ամուսնը, որ տարիեռով շատ աւելի մեծ է նրանից, խորհուրդներ տար, դեկավարէր նրան... Բայց իսկի հոգն էր այդ:

Եւ պ. Շէքը սկսեց փնտվել իր փեսային, այդ ծանրաբիւն շվեցարացուն, որ ամբողջ կեանքը անց էր կացնում արհեստանոցում, աշխատելով ինչ որ մնքենայ հնարել, չէր ուզում կնոջը ուղեկցել հիւր, գնալիս և ամեն բանից բարձր էր դասում իր ծերամուրիական սովորութիւնները, չիբուխը, գարեջրատունը:

Պէտք էր տեսնել, թէ ինչպիսի արխատօկրատական արհամարհանիքի արտայայտութեամբ էր արտասանում պ. Շէքը այդ «գարեջրատուն...» խօսքը: Եւ սակայն, զրեթէ ամեն երեկոյ նա գնում էր այնտեղ Ծիրէքի հետ դարեջուր խմելու և յանդիմանութիւններ էր թափում նրա գլխին, եթէ նա գէթ մի անդամ չէր գալիս ժամադրութեան:

Իբրև հիմք այդ բոլոր դատարկաբանութեան՝ Մայլ փողոցի վաճառականը, —Կոմիտիօներութիւն, արտահանութիւն, —մի բոլորովին որոշ միտք ունէր զլիսումը: Նա ուզում էր թողնել իր խանութը ու քաշուել գործից, և բաւական ժամանակից ի վեր միտքը զրել էր գնալ Սիրոնին տեսնելու, որպէս զի նրան շահէր իր նոր ծրագրի կողմբ: Ուրեմն ամեննեին յարմար րոպէ չէր այդ՝ անախորդ խօսակցութիւններ ունենալու և հայրական իշխանութեան ու ընտանեկան պատուի մասին խօսելու համար:

ինչ վերաբերում է տիկին Շէրին, որի համոզմունքը իր աղջկայ անմեղանշականութեան վերաբերմամբ մի քիչ թուլացել էր օրիորդ Պլանուսի բերած ապացուցներից յետոյ, — նա խորասուզուել էր խորին լուսութեան մէջ, ինչ կինը ուրախ կը լինէր, որ խուլ լինէր, կոյր լինէր, երբէք ճանաչած չը լինէր օրիորդ Պլանուսին:

Ինչպէս այն բոլոր մարդիկ, որոնք շատ անբախտ են եղել, նա սիրում էր քարանալ հանգստութեան նմանութիւն ունեցող մի վիճակի մէջ, և անգիտութիւնը ամեն բանից գերադաս էր թուում նրան: Միթէ նրանց կեանքը առանց այն էլ բաւական տիսուր չէր, Տէր Աստուած: Եւ վերջապէս Սիդօնին միշտ կարգին աղջիկ էր եղել, ինչու չը պէտք է նա կարգին կին լինէր:

Մութն ընկնում էր:

Պ. Շէրը ծանրօրէն վերկացաւ տեղիցը, փակեց խանութի տախտակափեղերը ու վառեց գաղի ճրագը, որ լուսաւորեց պատերի մերկութիւնը, դարակների փայլուն դատարկութիւնը և առհասարակ խանութի մէջի ամրող տեսարանը, որ բաւական նման էր սնանկութեան հետեւեալ օրուայ մի տեսարանի: Անխօս և՝ լուսութիւն պահպանելու վճականութեամբ ըերանը արհամարհու կերպով սղմած, նա կարծես ուզում էր ասել պառաւ օրիորդին. «Արդէն երեկոյ է... տուն գնալու ժամանակ է...» իսկ այդ միջոցին յետեի սենեակից լսում էր տիկին Շէրի ձայնը, որ հեկեկում էր այնտեղ ընթրիքի պատրաստութիւններ տեսնելով:

Դրանով վերջացաւ օրիորդ Պլանուսի այցելութիւնը:

— Հը՞, ինչպէս եղաւ, հարցրեց նրանից ծեր Սիդիզմունդը, որ անհամբերութեամբ սպասում էր նրան:

— Զուզեցին հաւատալ ասածիս և քաղաքավարի կերպով դուրս արեցին ինձ տանից:

Իեղձ աղջկայ աչքերը արտասուակալեցին, երբ յիշեց այդ ստորացումը:

Ծերուկը սաստիկ կարմրեց և, մեծ ակնածութեամբ բռնելով նրա ձեռքը, ծանրօրէն ասաց.

— Ի՞մ քոյր օրիորդ Պլանուս, ներողութիւն եմ խնդրում ձեղնից, որ այդ քայլն անել տուեցի ձեզ. բայց հարցը ֆրոմօնների առետրական տան պատուին էր վերաբերում:

Այդ ռոպէից սկսած Սիդիզմունդը քանի գնում աւելի ու աւելի տիրում էր: Դրամարկը այլ ևս ամուր ու ապահով չէր թուում նրան: Նոյն իսկ երբ Ֆրոմօն կրասերը նրանից փող չէր պահանջում, նա այնուամենայնիւ երկիւղ էր կրում և

Եր բոլոր երկիւղները ամփոփում էր երեք խօսքի մէջ, որոնք
միշտ նրա բերանն էին գալիս, քրոջ հետ խօսելիս:

—Chai bas confiance!... *) ասում էր նա գերմանախօս
վեյցարացու աղաւաղ ոճով և արտասանութեամբ:

Միշտ մտատանջուելով դրամարկղի համար, զիշերները նա
երբեմն երազում տեսնում էր, թէ արկղը խախուտացել էր
ամեն կողմից և բաց էր մնում, չը նայելով բանալիով կարգին
փակուած լինելուն, կամ թէ սաստիկ քամի էր բարձրանում և
ցիրուցան անում բոլոր թղթերը, տոմսերը, չեքերը ու արժե-
թղթերը և ինքը վազգում էր նրանց յետեից գործարանի մի
ծայրից միւսը, ուժասպառ աշխատելով հաւաքել գետնից:

Ցերեկը, իր վանդակապատի յետեսում, նրան թւում էր,
թէ մի փոքրիկ սպիտակ մուկ մտել է արկղը ու չարունակ
կրծում ու փչացնում է ամեն ինչ, հետզհետէ գիրանալով ու
սիրունանալով աղէտի սաստկացման չափով:

Ուստի, երբ կէսօրից յետոյ Սիդօնին երեսում էր պատշգամ-
բում, կօկոտի նման զուզուած զարդարուած, ծեր Սիգիզմոնդը
դոզդոզում էր կատաղսթիւնից: Նրան թւում էր, թէ իր առ-
ջեռով անցնում է դէպի դրան մօտ սպասող կառքը ինքը տնա-
քանդութիւնը, բալտաւոր կօքէտ կոնդ հանգիստ կերպարանքով:

Տիկին Ռիսլէրը չը գիտէր, որ այստեղ այդ զետնայարկի
պատուհանի յետեին, գտնուում է մի թշնամի, որ ամեն բոլէ դա-
րանամուտ դիտում է նրա ամենաչնչին արարքները, նրա կեան-
քի ամենաաննշան մանրամասնութիւնները, դաշնամուրի վար-
ժուհու զնալ գալը, առաւօտները եկող նշանաւոր գերձակուհուն,
տուն բերուող բոլոր կարտոնները և «Լուկր» մադաղինի գոր-
ծակատարների երիցաւոր զիսարկները ու ծանր կառքը, որ
կանգ է առնում բաժոժների զնդզնդոցով, ինչպէս հուժկու ձիւ-
րով լծուած մի հանրակառք, որ ֆրօմօնների առետրական տունը
արագ-արագ տանում էր դէպի մնանկութիւն:

Սիգիզմոնդը համարում էր ծրաբները, աչքով կշռում էր
նրանց և բաց պատուհանների միջով հետաքրքրութեամբ թա-
փանցում էր Ռիսլէրների բնակարանի ներսը: Նրա աչքից ոչինչ
չէր խուսափում, ոչ գորգերը, որ թափ էին տալիս մեծ ազմու-
կով, ոչ ծաղկարանները, որ գուրս էին գնում արեի առաջ, լի
հիւանդու, ջերմոցային, թանկազին ու հաղուազիւտ ծաղիկնե-
րով, և ոչ լացուցիչ պաստառները:

Նա իսկոյն նկատում էր նոր առնուած բաները, որոնցից

*) Je n'ai pas confiance—վստահ չեմ:

իւրաքանչիւրը համապատասխանում էր իրանից պահանջուած մի որոշ խոչոր գումարի:

Բայց ամենից շատ նա ուսումնասիրում էր Ռիսլէրի երես սահարքը:

Նրա կարծիքով, իր բարեկամը, այդ լաւագոյն, աղնուած գոյն մարդը աշխարհում, կնոջ ազգեցութեան չնորհիւ սկսել էր դառնալ մի անսամօթ սրիկայ: Նրա համար ոչ մի կասկած չը կար այդ բանում: Ռիսլէրը անշուշտ գիտէր, որ իր պատիւը խայտառակւում է, և հաշուել էր այդ բանի հետ: Նա լռութիւն էր պահպանում, որովհետև վճար էր ստանում դրա համար:

Անկասկած, Սիգիզմունդի կողմից մի տեսակ հրէշային բան էր այդ ենթագրութիւնը: Բայց չը պէտք է մոռանալ, որ անընթե բնաւորութիւններին, որոնք երբէք ձանաշած չը լինելով անառակութիւնը՝ նոր են սկսում ձանաչել, յատուկ է իսկոյն և եթե երենեկայութեամբ գնալ չափազանց հեռու, եղածիցն էլ դէնը: Մի անգամ Սիգննիի ու Ժօրժի դաւանանութեան մէջ համոզուելուց յետոյ՝ էլ այնուհետև նա շատ անհաւանական չէր համարում Ռիսլէրի ստորութիւնը: Եւ, վերջապէս, էլ ուրիշ ինչպէս կարելի էր բացատրել Ռիսլէրի անհոգութիւնը իր առևտրակցի ծախսերի վերաբերմամբ:

Իր գծուծ և բուտինական ազնւութեամբ ծերունի Սիգիզմունդը անկարող էր հասկանալ Ռիսլէրի սրտի փափկանկատութիւնը: Բացի այդ, ահազին տարբերութիւն կար նրա պէս վաճառականի սուր խելք և հաշուապահի մեթօդիկական սովորութիւններ ունեցողի և Ռիսլէրի նման մաքամուր, քշուած կէսգեղարուեստագէտի, կէս-հնարչի միջն: Նա իր չափովն էր չափում այդ բոլորը, անընդունակ լինելով հասկանալու, թէ ինչ տեսակ վիճակի մէջ է լինում հնարելացաւով բռնուած, մենագաղափարով գրաւուած մի մարդ: Լուտնուսների նման են այդ մարդիկ: Նրանք նայում են, բայց չեն տեսնում, որովհետև նրանց հայեցքը ուղղուած է դէպի իրանց ներսը:

Սիգիզմունդի կարծիքով, Ռիսլէրը լաւ տեսնում էր ամեն ինչ:

Այդ մտածմունքը ահազին դժբախտութիւն էր պատճառում ծեր գանձապահին: Սկզբում նա ուշի ուշով նայում էր Ռիսլէրի երեսին ամեն անգամ: Երբ նա մտնում էր իր սենեակը, յետոյ, երբ յուսահատուեց, տեսնելով իր բարեկամի անզգայ անտարբերութիւնը, որ նրան նախամտածութեամբ ու դիտմամբ հագած դիմակ էր թւում, նա սկսեց երեսը շուռ տալ նրանից և կամ թղթերն էր քրքրում, որպէս զի չը հանդիպէր նրա կեղծ հայեցքներին, կամ, եթէ պէտք էր լինում հետը խօսելու, աչքը

յառում էր պարտէզի ծառուղիներին կամ վանդակապատի ցանցին։ Ասածներն էլ այնպէս անորոշ և ճախ ու ծուռ էին լինում, ինչպէս և հայեացքները։ Դժուար էր իմանալ, թէ ում էին ուղղուած լինում նրանկը։

Էլ չը կային առաջուան մտերմական ժպիտները, էլ ծերուկը առաջուան պէս Ռիսլէրի միտքը չէր քցում հին յիշողութիւնները, թերթելով գործարանի հաշուեզրբերը։

«Ահա քո մտած տարին... ոսճկիդ առաջին աւելացումը... Միտքդ է։ Այդ օրը ճաշեցինք Դույի ճաշարառմ.. երեկոյեան էլ գնացինք Կոյրերի սրճարանը... Հը, յիշում ես։ Լաւ քէփ էր, չը»։

Վերջ ի վերջոյ Ռիսլէրը նկատեց իր բարեկամի ու իր մէջ սկսուած տարօրինակ սառնութիւնը և կոսջը յայտնեց այդ բանը։

Սիդօնին էլ մի ժամանակից ի վեր զգում էր այդ հակակութիւնը իր շուրջը պտոյտ դալիս։ Երբեմն, բակով անցնելիս, նա իրան մի տեսակ վատ էր զգում իր վրայ ուղղուած չարակամ հայեացքներից, որոնք ստիպում էին նրան ջղայնաբար շուռ գալ դէպի ծերունի գանձապահի պատուհանը։ Ուստի երկու բարեկամների մէջ տեղի ունեցած այդ գժտութիւնը ահ քցեց նրա սիրտը և նա իսկոյն միջոցներ ձեռք առաւ նախագգուշնելու իր ամուսնուն Պլանուսի չարախօսութիւններից։

—Միթէ չէք տեսնում, որ նա նախանձում է ձեզ, ձեր դիրքին... Գիշ է մնում տրաքուի, տեսնելով, որ իր նախակին հաւասար ծառայակիցը այժմ իր իշխանաւորն է դարձել... Բայց միթէ արժէ ուշք դարձնել այդպիսի բաների... Գիտէք, որ... այստեղ ամենքն էլ չարակամութեամբ են վերաբերում ինձ։

Բարեհոգի Ռիսլէրը չոեց իր խոշոր աչքերը.—«Ի՞նչպէս, քեզ»։

—Ի հարկէ, ակնյայտնի երեսում է, որ այստեղ ամենքն էլ ինձ ատում են։ Տրաքում են, տեսնելով, որ փոքրիկ Շէրը դարձել է տիկին Ռիսլէր աւագ... Աստծուն է միայն յայտնի, թէ ինչպիսի խայտառակ բաներ են տարածում իմ մասին... Եւ կարող եմ ձեզ հաւատացնել, որ ձեր գանձապահը շատ կարծէ պահում լեզուն... Օ՛ֆ, սաստիկ օձ մարդ է։

Սիդօնին իր նպատակին հասաւ։ Ռիսլէրը վրգովուեց և չափազանց հպարտ լինելով, որպէս զի գանգատուէր, սկսեց ինքն էլ սառնութեամբ պատասխանել իր նախակին բարեկամի սառնութեանը։ Այդ ազնիւ մարդիկ, լի անվատահութեամբ մէկը դէպի միւսը, այլևս չէին կարողանում հանդիպել իրար առանց վերին աստիճանի անախորժ զգացմունքի, այնպէս որ մի ժա-

մանակից յետոյ Ռիսլէր աւագը ուղը բոլորովին կտրեց գանձապահի սենեակից: Այդ, ասենք, հեշտ էր նրա համար այն պատճառով, որ բոլոր փողային հարցերը ֆրօմօն կրտսերը վերցրել էր իր վրայ: Ամեն ամսի երեսունին Ռիսլէրի ամսականը ուղարկում էին նրա բնակարանը: Այդ աւելի ևս հեշտացնում էր ժօրժի ու Սիդոնիի բանը և ննարաւորութիւններ էր տալիս նրանց հազար ու մի խայտառակութիւններ կատարել ամենայն ապահովութեամբ:

Սիդոնին զբաղսւած էր այդ ժամանակ լրացնելով իր շքեղ կեանքի ծրագիրը: Սեփական ամարանոց էր պակասում նրան: Իսկապէս ասած, նրան ատելի էին ծառերը, գաշտերը և մարդու աչք ու բերան փոշիով լցնող ճանապարհները:

— Աշխարհում դրանից աւելի տիսուր բան չը կայ, ասում էր նա յաճախ:

Բայց կէր ֆրօմօնը ամառը անց էր կացնում Սավինիում: Հէնց որ օրերը տաքանում էին, ներքեի յարկում սկսում էին պայուսակները կապել, վարագույնները վայր բներել, և տնափոխութեան մի ահագին կառք, որի մէջ ճօճւում էր երեխայի կապտագոյն օրօրոցը, ճանապարհ էր ընկնում դէպի պապի գղեակը: Յետոյ մի առաւտա մայրը, տատը, երեխան ու ծծմայրը, փաթաթուած սպիտակ ճոթերի և թեթև շղարշների մէջ, երկծի կառքով սլանում էին դէպի արեառ սիզամարգերը և նշդարենիների մեղմ ստուերը:

Այդ միջոցին Պարիզը տգեղացած, ամայացած էր լինում: և թէպէտ Սիդոնին սիրում էր Պարիզը նոյն իսկ այդ ամարային եղանակին, երբ նա տաքանում է հնոցի պէս, այնուամենայնիւն նրան ծանր էր մտածել, որ այդ ժամանակ բոլոր հարուստ ու գողարիկ պարիզուհիները զքօնում են ծովափերում իրանց բացգոյն հովանոցների ստուերում և իրանց ճանապարհորդութիւնը մի տեսակ պատրոււակ են դարձնում հազար ու մի նոր ու մտացածին բաների և տարօրինակ ու համարձակ մօդաների համար, որոնք կանանց ճանարաւորութիւնն են տալիս ցոյց տալու, որ իրանք գեղեցիկ ազդը ունեն և սեփական, ոչ կեղծ երկար ու գանգուր չագանակագոյն մազեր:

Ծովային լրղարաններ: Այդ անկարելի էր: Ռիսլէրը չէր կարող բացակայել:

Ամարանոց առնել: Դեռ միջոցներ չունէին:

Սիրականը պատրաստ էր ի հարկէ ամենամեծ ուրախութեամբ կատարել Սիդոնիի այդ նոր քմահաճաքը, բայց ամարանոցը չէ կարել թագնել մի ապարանջանի, մի քաշմիրի շալի նման: Պէտք էր այնպէս անել, որ ամուսինը ընդունէր այդ ըն-

ծան: Հեշտ բան չէր այդ, սակայն Ծիսլէրի հետ կարելի էր փորձել:

Հողը պատրաստելու համար Սիդօնին անընդհատ խօսում էր, թէ վատ չէր լինի մի փոքրիկ, ոչ շատ թանկ ամարանոց ու նենալ Պարիզի մօտերքը: Ծիսլէրը լսում էր ժայռափի: Նա արգէն տանջւում էր սեփականատիրութեան պահանջով, որ ակրսում և զարդանում է մարդու մէջ հարստութեան հետ միասին, և նրա երեակայութեան մէջ պատկերանում էին բարձրահասակ խոտեր և գեղեցիկ պտուղներով լի այգիներ, սակայն, խոհեմ լինելով, նա ասում էր.

—Կը տեսնենք... կը տեսնենք... Սպասենք տարեվերջին: Տարեվերջին, այսինքն հաշուեկշոփն:

Հաշուեկշոփ:

Մոգական խօսք է այդ: Ամբողջ տարին մարդիկ գլխապատճ առաջ են ընթանում գործերի մրրիկի մէջ: Փողը ներս է մտնում, դուրս է զավլու, ձեռքէ ձեռք է անցնում, նոր փող է ներս բերում, շաղ է անցնում, և առևտրական տան հարստութիւնը, իբրև մի փայլուն ու անկախելի յարաշարժ օձ, երկարանում է, կարծանում, մեծանում, փոքրանում, այնպէս որ անկարելի է գաղափար կազմել նրա վիճակի մասին նախ քան հանգստի բոպէն: Միայն հաշուեկշոփն միջոցին կարելի է իմանալ գործերի դրութիւնը և այն թէ արդեօք այդ տարին, որ յաջողակ էր թւում, յաջողակ է խվապէս:

Ընդհանրապէս, հաշուեկշոփը պատրաստւում է գեկտեմբերի վերջերբին, Ծննդեան տօնի *): Կամ՝ նոր տարուայ օրից մի քիչ առաջ: Այդ ժամանակ գործարանի ծառայողները շատ ուշ են վերջացնում պարապմունքները, որովհետև հաշուեկշոփը աւելորդ աշխատանք է պահանջում: Ամբողջ առևտրական տունը ոտքի վրայ է լինում: Լամպերը, որոնք գրասենեակներում վառուած են մեռում նրանց փակուելուց երկար ժամանակ անցած, կարծես նոյնպէս մասնակցում են տօնային տրամադրութեանը, որով համակուած է լինում տարուայ այդ վերջին շաբաթը, երբ այնքան պատուհաններ լուսաւորուում են ընտանեկան երևկոյթների միջոցին: Մինչև ամենաաննշան ծառայողը, ամենքը հետաքրքրուում են հաշուեկշոփի հետեանքներով: Նոր տարուայ պարզեատրութիւնները և ոռջիկ աւելացումը կախուած են լինելու այդ երանելի թուանշանից: Այնպէս որ այն միջոցին, երբ քննուում են հարուստ գործարանի ահագին շահերը, հինգերորդ

*): Երբոպական երկիրներում Քրիստոսի ծնունդը տօնում են գեկտեմբերի 25-ին:

յարկերում կամ քաղաքի շրջակայքում գտնուող մասն ընակարաններում՝ ծառայողների կանաց, երեխաները, ծեր ծնողները իրար հետ խօսում են հաշուեկշոփ մասին, որի հետևանքը զգալ կը տայ իրան կամ տնտեսած փողերի կրկնապատկութեամբ կամ թէ որ և է առօղվ, որ երկար ժամանակ յետաձւում էր և այժմ վերջապէս հնարաւոր է գառնում պարզեատրութեան չնորհիւ:

Ֆրօմծն կրտսերի և Ռիսլէր աւագի գործարանում այդ ժամանակ Սիդիզմունդ Պլանուսը կտուարեալ աստուած է ամենքի համար և նրա փոքրիկ վանդակապատը՝ սրբութիւն սրբոց, ուր աքնում են բոլոր գործակատարները: Նիրհած գործարանի լուս-թեան մէջ շխշխալով դառնում են ահազին հաշուեզբքերի ծանր էջերը, բարձրաձայն արտասանուում են զանազան անուններ և առիթ են տալիս քըքրելու ուրիշ զրքեր: Գրիչները ճոճում են: Ծերունի գանձապահը, շրջապատուած իր օգնականներով, բազմազբազ և ահարկու կերպարանք է ստացել, ժամանակ առ ժամանակ Ֆրօմծն կրտսերը, կառք նստելուց առաջ, մտնում է ներս, սիդարը բերնին, ձեռնոցները հազին, բոլորովին պատ-րաստ: Նա կամաց-կամաց, ոտների ծայրի վրայ դալիս է և, կոանալով վանդակապատի վրայով, հարցնում:

—Հը... աջնդ է գնում:

Սիդիզմունդը մրմութում է և երիտասարդ գործարանատէրը հեռանում է, չը համարձակուելով այլ ևս հարց տալ: Գանձապահի դէմքից նա իսկոյն գուշակում է, որ բարի համբաւ չի ասելու:

Սրդարե, յեղափոխութեան տարիներից ի վեր, երբ մար-զիկ իրար կոտորում էին գործարանի բակերում, երբէք Ֆրօ-մծնների առետրական տանը չէր տեսնուած այդպիսի ողորմելի հաշուեկշոփ: Մոււաքը և ելքը հաւասար էին դալիս: Բնդհանուր ծախսերը կլանել էին բոլոր եկամտաները, և դեռ Ֆրօմծն կրտսերը մեծ գումարներ էր պարտօ մնում գրամարկդին: Պէտք էր տեսնել ծեր Պլանուսի վհատ կերպարանքը, երբ զեկուեմբերի 31-ին նա բարձրանում էր վերև ներկայացնելու ժօրժին իր համիները:

Ժօրժը շատ ուրախ լսեց հաշիւների հետևանքը: Բան չը կայ, ապագայում գործը աւելի յաջողակ կ'երթայ: Եւ գանձա-պահի տրամադրութիւնը տեղը բերելու համար, արտակարգ պարզեատրութիւն տուեց նրան, հազար ֆրանկ, մինչզեռ ա-ռաջ հինգ հարիւր ֆրանկ էր տալիս հօրեղբայրը: Բոլորին էլ բաժին հասաւ այդ մեծահոգութիւնից, և ընդանուր գոհունակու-թեան մէջ շուտով մոռացուեց տարեկան ողորմելի հաշուեկշիուը: Ինչ վերաբերում է Ռիսլէրին, ժօրժը իր վրայ վերցրեց նրան

գործերի զրութեան հետ ծանօթացնելու պարտականութիւնը:

Մանելով իր առևտրակցի փոքրիկ առանձնասենեակը, ուր, ինչպէս առհասարակ արհեստանոցներում, պատուհանը վերսից էր և լոյսը ուղղահայեաց ընկնում էր հնարիչի ծրագիրների վրայ, Ֆրօմօն կրտսերը մի բռպէտ տատանումն, ամօթ և խղճահարութիւն զգաց այն բանից, ինչ որ անելու էր:

Ոիսլէրը, դռան ձայնը լսելով երեսը շուռ տուեց և ուրախուրախ բացականչեց.

— Շօրշ, Շօրշ, սիրելի բարեկամս... Համարեա գտած վերջացած է մեր տպագրիչը... Միքանի մանր մունք բաներ են մնացել... Բայց այդ ոչինչ, այժմ ևս վստահ եմ յաջողութեան վրայ... կը տեսնէք... կը տեսնէք... ել այժմ որքան ուզում են, թողմրցեն մեղ հետ Պրօշասնները... Ոիսլէրեան տպագրիչով մենք կը յաղթենք բոլոր մրցորդներին...

— Կեցցէք, ընկերու, պատասխանեց Ֆրօմօն կրտսերը... Այդ տպագրի բան է. իսկ ներկայի մասին չէք ել մտածում: Հապամեր հաշուեկշուը...

— Ճիշտ էք: Մաքիցս բոլորովին ընկել էր... Շատ էլ փայլուն չի, չէ:

Նա ասում էր այդ, նայելով փոքր ինչ յուզուած ու շփութուած Ժօրժի երեսին:

Ժօրժը պատասխանեց.

— Ոչ, ոչ շատ փայլուն է, ընդհակառակը: Մենք տեղիք ունենք գոհ լինելու, մանաւանդ առաջին տարուայ համար... Իւրաքանչիւրս քառասուն հազար Գրանկ շահ ենք ստացել: Եւ որովհետև մտածեցի, թէ գուցէ փողի կարիք ունենաք ձեր կնոջ համար կաղանդչէք առնելու...

Զը համարձակելով նայել այդ ազնիւ մարդու երեսին, ուրին նա խարըում էր այդպէս, Ֆրօմօն կրտսերը մի կապոց չէքեր ու արժէտումներ դրեց սեղանի վրայ:

Ոիսլէր աւագը յուզուեց մի բռպէտ: Այդքան փող միմիայն իրան: Նա իսկոյն մտածեց Ֆրօմօնների մեծահոգութեան մասին, որնք իրան մարդ էին շինել, և յետոյ փոքրիկ Սիդօնիի մասին և նրա այն ցանկութեան մասին, որ նա այնքան յաճախ յայտնում էր և որ ինքը այժմ կարող էր կատարել:

Արտասունքն աչքերին և բարի ժպիտը շրթունքներին նա մեկնեց երկու ձեռքը իր ընկերակցին.

— Ո՞րքան գոհ եմ ես... Ո՞րքան գոհ եմ ես...

Այդ նրա սովորական խօսքն էր հանդիսաւոր դէպքերում: Յետոյ ցոյց տալով իր առաջը դրուած կապոցը ու թեթև կեր-

պով թերթելով արժէտումները, որոնք այնքան հեշտութեամբ թե
են առնում ու թուզում մարդու ձիւքից.

—Գիտէք ինչ բան է այս, ասաց նա Ժօրժին յաղթական
գէմքով... Սիդօնիի ամարանոցն է այս:

Այ թէ այ:

VII

Մ Ի Ն Ա Մ Ա Կ

Ֆրանսիական Ընկերութեան ինժեներ պ. Փրանց Ռիվերին:
Խամայիլիա (Եզիփտոս)

Ֆրանց, որդեակա, ծերունի Սիգիզմունդն է քեզ նամակ
գրողը: Եթէ աւելի լաւ կարողանայի արտայայտել մաքերս
թղթի վրայ, շատ երկար բաներ պէտք է պատմէի քեզ: Բայց
այս անիծած ֆրանսերէնը շատ դժուար լեզր է և թուանշան-
ների աշխարհից դուրս ոչինչ չարժի Սիգիզմունդ Պլանուսը:
Ուստի, իսկոյն եեթ կ'ասեմք քեզ, թէ ինչումն է բանը:

Եգորորդ տանը շատ վատ բաներ են անց կենում: Կինը
նրան գաւաճանում է նրա ընկերակիցի հետ: Նա ծիծաղելի է
դարձրել իր մարդուն, և, եթէ այսպէս շարունակուի, այն-
տեղ կը հասցնի, որ կը սկսեն սրիկայ համարել նրան... Լսիր, իմ
փոքրիկ Ֆրանց, պէտք է իսկոյն եեթ վեր կինաս գաս: Միայն
դու կարող ես խօսել Ռիսլէրի հետ ու աշքերը բանալ այդ Սի-
դօնիի վերաբերմամբ: Մեզնից ոչ ոքի նա չի հաւատար: Շուտով
արձակուրդ ինդիքիր ու եկ:

Գիտեմ, որ հաց վաստակելու, ապագայ յաջողացնելու վրայ
ես այդանեղ. Բայց աղնիւ մարդս ամեն բանից վեր պէտք է դա-
սի իր ծնողներից ժառանգած անուան պատիւը: Ուրեմն լաւ ի-
մացիր, որ եթէ իսկոյն եեթ չը գաս, շուտով այնպիսի բոպէ
կը հասնի, երբ Ռիսլէր անունը այն աստիճան խայտառակուած
կը լինի, որ դու այլ ես չես համարձակիլ կրել նրան:

Սիգիզմունդ Պլանուս,

գանձապահ:

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը շարունակուի)